№ 173 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 11

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 11 № 173

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Բագուի բաժանորդներին լրագիր հասցնելը խմբագրութեան տուած հասցէներով վերցրել է իր վրա Թադէոս Բունիաթեան (գրավաճառանոց, հայոց եկեղեցուն կից), ուստի լրագրի համարների ուշ կամ անկանոն ստացվելու դէպքում Բագուի բաժանորդները պէտք է դիմեն նրան:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հասցէն փոխելու համար պէտք է վճարել 40 կոպէկ:

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը

Տարեկան գինն է Թիֆլիսում 4 ր, դուրսը՝ 5 ր., 1/2 տարվայ գինն է Թիֆլիսում 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կ., երեք ամսվանը 1 ր., դուրսը՝ 1 ր. 25 կ.:

Ծան.—Սկզբում, մտադրվելով «Խաթաբալան» երկու շաբաթը մի անգամ լոյս ընծայել, տարեկան գինը որոշել էինք 2 ր. և 2 ր. 50 կ: Բայց այժմ, քանի որ այն շաբաթաթերթ դարձրինք, այդ պատճառով էլ գինը կրկնապատկում ենք:

Վաճառվում է գաւառական բոլոր հայաշատ քաղաքներում:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція «Хатабала».

Շաբաթ, օգոստոսի 12-ին, լոյս կը տեսնէ № 10.

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ.) առ. 1—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԶԱՆԳ"

Հասարակական, տնտեսական, քաղաքական եւ գրական օրաթերթ

Բաժանորդագինն է մինչև տարվայ վերջը 3 րուբլի:

» » » 1-ն սեպտեմբերի 40 կոպ.:

Դիմել՝ Тифлисъ, Редакція «Зангъ» կամ Tiflis (Russie), redaction «Sang».

Խմբագրութիւնը գտնվում է Թիֆլիսում, Ֆրէյլինսկայա փող. № 6

(առ.) 1—3

Թիֆլիսում գտնվող պարսկահպատակ հայերը յայտնում են ի գիտութիւն հայ հասարակութեան, որ շաբաթ օր, օգոստոսի 12-ին, առաւօտեան ժամը 11 ին, Վանքի մայր եկեղեցում կատարվելու է պատարագից յետոյ

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Նորին Մեծութիւն Իրանի Շահնշահ Մուզաֆֆէր-էդդինի Պարսկաստանի ժողովրդին սահմանադրական իրաւունքներ շնորհելու առիթով:

(ուր. շար.) առ. 1—2

Բացված է բաժանորդագրութիւն

„ՆՈՐ-ԽՕՍՔ"

Քաղաքական, հասարակական, տնտեսական ամենօրեայ թերթ

Տարեկան բաժանորդագրութիւնը 6 ր.
Ամսական . . . 50 կ.

Հասցէն ժամանակաւորապէս Тифлисъ, Сололакская, 3.

առ. 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ հաշւի կայ այստեղ. Վերջին տեղեկութիւններ. Պարսկական սահմանադրութիւն. Համակրութեան ցոյցեր. Շարժումներ Եւրոպայում. Պետական Դումայի շուրջը. Ցարական բիւրոկրատիան. Ընտրութիւնների շուրջը. Մի պատմութ. Յովհաննեան դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւն. Էջմիածնի կենտրոնական ժողովի շուրջը. Կենտրոնական ժողովին. Գաղթային հարցը Ամերիկայի մէջ. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Երևանից. Նամակ Նոր-Բայազէտից, Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ի՞ՆՉ ՀԱՇՒԻ ԿԱՅ ԱՅՍՏԵՂ

I

Երկու օր է, որ Թիֆլիսում պտտում են ամէն տեսակ լուրեր զանազան ընդհարումների մասին, որոնք իբր թէ տեղի ունեն ներկայումս մեր երկրի զանազան մասերում:

Այդ լուրերին նայելով Օրդուբադի և Սգուլիսի շրջանը ներկայումս խիստ ընդհարումների բեմ է դարձել և այնտեղ կան արդէն բազմաթիւ զոհեր: Իբր թէ Շուշում, Երևանում և նրանց շրջակայքում նորից բռնկվել են ընդհարումներ: Իբր թէ Նախիջևանի գաւառի և Դարալագեազի լեռներում նորից մեծ աւարառութիւններ են տեղի ունեցել: Իբր թէ Գանձակի և Ղազախի շրջակայքում տեղի են ունեցել բազմաթիւ սպանութեան դէպքեր:

Մենք ասում ենք «իբր թէ», որովհետև այդ լուրերը կամ բոլորովին անհիմն են, կամ սաստիկ չափազանցրած:

Մենք աշխատեցինք ստուգել լուրերի մեծ մասը և նրանք անհիմն դուրս եկան:

II

Անկասկած է, որ պէտք է նախազգուշական միջոցներ ձեռք առնված լինեն, որպէս զի ընդհարումներ չը ծագեն, իսկ ծագած ժամանակ նրանք չը վարակեն ընդարձակ շրջաններ:

Անկասկած է և այն, որ պէտք է տեղական մարդիկ ուշի ուշով հետևեն կրքերը գրգռելու եղած դէպքերը և անմիջական բաւարարութիւն տալու ընդհարվողներին հէնց սկզբնական քայլերում. ուստի և պէտք է դիւրազգաց լինել դէպի այն երևոյթները, որոնք կարող են յուզմունքների առիթ դառնալ:

Բայց միևնոյն ժամանակ մեծ պարտաւորութիւն է ծանրանում մեր բոլորի վրա աղմուկներ չը յարուցանել և յուզմունքներ առաջ չը բերել չը ստուգված լուրերի առիթով, որովհետև այդպիսի յուզմունքները յաճախ իրանք մթնոլորտ են ստեղծում դիւրաբորբոք շարժումներ առաջ գալու և բարդութիւններ կուտակվելու համար:

III

Երկու տարվայ սարսափելի մեր մարտիրոսագրութիւնը մեզ ընտելացրեց ամեն տեսակ անակընկալների: Մեզնից ոչ ոք չի զարմանայ, եթէ վաղը իրականութեան փաստեր դառնան բոլոր այն լուրերը, որոնք պտտում են բերանից բերան:

Այդ այդպէս է:

Բայց հէնց այդ հանգամանքը մեզ վրա կրկնակի պարտաւորութիւն է դնում, որ մենք առանց ստուգութեան իսկոյն չը տարածենք սուտ, հնարած և կամ երկիւղի թելադրած լուրերը:

Մեր կեանքը այնպիսի ցաւալի վիճակ է ստացել, որ միշտ էլ պէտք է նախազգուշական միջոցներ ունենալ ձեռքի տակ յանկարծահաս թշուառութիւնների առաջն առնելու համար: Բայց չը պէտք է երևակայական դէպքեր հնարել այնտեղ, ուր ամեն րոպէ կեանքը կարող է իրական սարսափներ հանդէս բերել մեր առաջ:

VI

Սուտ և չափազանցրած լուրերի տարածելը այն մեծ վտանգաւորութիւնը ունի, որ մարդիկ ընտելանալով չափազանցութիւններին, ապագայում անզգայ և թերահաւատ են դառնում դէպի այն դէպքերը, որոնք արդարև տեղի են ունեցել և սարսափներ են ստեղծել կեանքի մէջ, առաջացնելով սոսկալի զրկանքներ ու թշուառութիւններ:

Ի՞նչն է դրդում մարդկանց կեղծ լուրեր տարածել, միմեանց վախեցնել, միմեանց վրա սարսափ բերել—չենք հասկանում:

Եթէ հիմքում չը կան ստոր և դաւադրական նպատակներ, այն ժամանակ ուրեմն մենք գործ ունենք աններելի թեթևամտութեան կամ հոգեկան որոշ հիւանդութեան, պսիխօզի երևոյթի հետ:

Սակայն այդպիսի հիւանդութեան հետ չը պէտք է հաշտվէ հասարակութիւնը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Նախիջևան, 10 օգոստոսի

Օրդուբադի մասում եղած դէպքերը առայժմ աննշան են և չեն կրում ընդհանուր բնաւորութիւն: Սահմանի վրա հսկողութիւնը աւելացրած է: Վարչութիւնը ուշի ուշով հետևում է, որ բարդութիւններ չը ծագեն: Զօրքի թիւը աւելացված է նախկինի համեմատ:

Ազգաբնակութեան մէջ յուզված տրամադրութիւն է տիրում, ուստի ամեն մի մանաւոր դէպք առանձին նշանակութիւն է ստանում:

—

Գորիս, 10 օգոստոսի

Նոր ընդհարումների մասին տեղեկութիւններ չը կան: Մաղաւուզի շրջանում հանգստութիւն է տիրում: Ղափանի շրջանում շարունակվում է յուզված վիճակը:

—

Գանձակ, օգ. 9-ին, առաւ. ժամի 10-ին.

«Քաղաք են բերվել Գանձակի գաւառի 3-րդ թաղամասի պրիստաւի ձեռքով խիստ ծեծված մի քանի հայեր»:

—

Գ. Ա. Մելիք-Ազարեան օգոստոսի 8-ին Գորիսի գաւառապետից ստացել է հետևեալ հեռագիրը.

«Օգոստոսի 2-ին Բարաբաթումցիները հրացանաձգութեան բռնվեցին տաւարը քշելու պատճառով Տայղաղ, Շիրվանլու, Կարաչիման և ուրիշ գիւղերի անցնող քօչւորների հետ, որով կռւի ժամանակ սպանվեց կարաչիմանցի Ջալալ-բէկ Սուլթանովի որդին և վիրաւորվեցին մի քանի հայեր: Միևնոյն ժամանակ, ցերեկվայ ժամը 11-ին այրվեց «Սիւնիք» գործարանը. կարծում եմ՝ հարևան գրգռված կարաչիմանցիների և ուրիշների ձեռքով, մտածելով, որ գործարանը իրանց գոյութեան գլխաւոր աղբիւրն էր կազմում: Սպանվել են ձեր մեքենագործ Խօջամիրեանը և երկու պահապաններ. մնացածները կարողացել են ազատվել: Քննութիւն է կատարվում: Ինքս կը մեկնեմ մօտ օրերս: Մանրամասնութիւնը պօստով: Ձեզ յայտնի է, որ Նախիջևանի գաւառում, Թիֆլիս տանող ճանապարհի վրա կողոպտվել և վիրաւորվել է երկրաչափ Գազարը»:

—

Գանձակ, 9 օգոստոսի

Մօտաւորապէս 2 ամիս առաջ տանում են Բալաբէգ Սաֆիբիւրդցու 12 հատ տաւարը, որի համար գեն.-նահանգապետ Ալիխանովը տուգանք էր նշանակել Վերին-շէնի վրա՝ 450 ր:

Անցեալ շաբաթ գաւառիս երրորդ մասի ռուս պրիստաւը, երբ գնում է իշխանութեան հրամանը ի կատար ածելու—պահանջելու Վերին-շէնից յօգուտ Սաֆիբիւրդցու 450 ր., վերին-շէնցիք հրաժարվելով տուգանքը վճարելուց, պատճառաբանում են, որ տաւարները ոչ թէ իրանց գիւղն են մտել, այլ իրանց հարևան Խարխափոր հայ գիւղը: Դիւրահաւատ պրիստաւը վերադառնալով Աշաղաղլա հայոց գիւղը, իր հետ վերցնում է այդտեղ բնակվող կոզակների զօրքը, ուղևորվում խարխափորցիներին թէ պատժելու և թէ որոշված տուգանքը նրանցից ստանալու: Պրիստաւը հասնելով գիւղը, իջևանում է մի պարտէզում, ու հրամանի սպասող կոզակների առանձն արձակում՝ մտնել տները և արժէքաւոր իրերը դուրս հանել: Կոզակները մտնում են այդ սակաւամարդ, աղքատութեան դուռը հասած շէնիկը և տներում ինչ որ արժէք ունեցող իրեր են լինում հանում, դուրս են թափում, գլխաւորապէս գարի, իւղ, պանիր և գինի ու արաղ. և այդ բոլորը մաքրազարդելուց յետոյ, բարձրանում են խոտի դէզերի գլուխը և բոլորը շուռ տալիս ու գետնին թափում, մի մասը ոչնչացնում, միւս մասը ձիաների առաջը թափում:

Գիւղացիներին նիւթապէս վնասներ տալուց, գիւղից տանում են 20 ընտիր տաւար դէպի Վերին-շէնը, ուր, ճանապարհին, Թանաքլու-բուլաղում, նրանց պատահում են գիւղ գնացող երեք խարխափորցիներ՝ Բէգլար Համբարձումեանը, Յակոբ Գաբրիէլեանը և Գրիգոր Մինասեանը: Պրիստաւը նրանց հարցնում է որտեղացի լինելը, երբ լսում է, որ անմեղ ճանապարհորդներ են, խարխափորցիներ, հրամայում է կոզակներին նրանց անխնայ ծեծել, ըստ երևոյթին զուարճութիւն և բաւականութիւն ստանալու համար: Բէգլար Համբարձումեանը բացի սարսափելի ջարդ ու փշուր լինելուց՝ ծանր վէրք է ստացել աչքից մտրակի անխիղճ հարուածներից և պլոկվել է երեսի կաշին: Մնացեալ երկուսն այնքան ծանր ծեծվել են, որ չեն կարողացել գնալ Գանձակ գանգատվելու. եկել է միայն Բէգլարը, բժշկական վկայական առնելով՝ դիմել է դատախազին. անշուշտ յանցաւորը իր արժանի պատիժը կը ստանայ, եթէ միայն գիւղացիք կարողանան վարել իրանց արդար դատը:

Ի դէպ, առիթից օգտվելով պէտք է ասեմ, որ առհասարակ մենք հայերս, գլխաւորապէս հայ գիւղացիք, համեմատական հաշւով, Թուրքերից շատ յետ ենք մնացել: Հայը միանգամայն անընդունակ է իր ցաւերը կարգին՝ բնական կերպով պատկերացնել: Կը գայ իշխանաւորի առաջ, ինչ որ հարկաւորն է՝ այդ մասին կը լռէ, ոչինչ չի ասիլ, կը խօսէ միայն երրորդական, չորրորդական հարցերի մասին: Այլ են Թուրքերը. նրանց ամենավերջին գիւղացին, գռեհիկը, այնպէս կը փաստաբանէ իր դատը և այնպիսի վառ գոյներով կը նկարագրէ իրանց վիճակը, որ դիմացի մարդը մի բան կը հասկանայ:

Մեր հայերի այդ մի պակասութեան շնորհիւ մենք շատ դատեր տանուլ ենք տալիս: Ահա ձեզ օրինակ վերոյիշեալ երեք գիւղացիք. չեն կարողանում իրանց գլխի եկած հասարակ պատմութիւնն անել... Ի հարկէ, սրանով ես չեմ գովում այն շատախօսներին, որոնք երկար գլխացաւանքներ տալով խօսում են, բայց անհրաժեշտը, կարևորը թողած, անպէտքական մասին են ճառում...

Սագան

—

Թաղա-գիւղ (Զանգեզուրի գաւառ).

Զանգեզուրի գաւառի խուլ անկիւններում ոչ մի օր չեն պակասում սպանութիւնը, գողութիւնը, աւազակութիւնը, քանի որ ամբողջ սարերը լցված են քիւրդ ցեղերով: Երբ որ դեռ քօչը սար չէր բարձրացել, տեղացի Թուրք տարրը քիւրդի անունով սարսափ էր ձգում խեղճ հայ գիւղացիների վրա, թէ՝ «գեավուրներ, թող մի քօչը բարձրանայ սար, տեսէք ձեր գլխին ինչ խաղ կը խաղանք». իսկ մենք այդ բոլորն էլ հաշւի չէինք առնում, որովհետև յոյս էինք դրել, թէ կառավարութիւնը արդէն միջոցներ է ձեռք առել առաջն առնելու այս անարդար արիւնհեղութեան, և այդ պատճառով էլ խեղճ գիւղացին առաւօտեան կանուխ գերանդին դրած ուսին գնում էր հանդը, խոտը հնձում, հաւաքում, բերում իր դառն օրը լալիս: Նա կարծում էր, թէ էլ Թուրքը հրոսակախմբեր կազմած յարձակում չի գործիլ շէն գիւղերը աւերելու, անմեղ արիւն թափելու. բայց դա էլ շատ չը տևեց. գարունը մեզ համար սև բացվեց. հէնց որ քօչը հասաւ սարը, տեղական Թուրքերը սկսեցին զինված երթևեկութիւն անել քիւրդերի մէջ, ժողովներ կազմել՝ հայի անունը ջնջելու. և յանկարծ լսեցինք, որ Ղալաջուղ գիւղը պաշարված է հազարաւոր ջանբեզարներով, բոլորը զինված մօսիններով, մաուզերներով և ուրիշ սիստեմի հրացաններով: Եւ այնպէս էլ եղաւ. Ղալաջուղը երեք օր պաշարված մնաց. պրիստաւը կէս հարիւրեակ կոզակներով եկաւ հասաւ, բայց չը կարողացաւ առաջն առնել, միայն կարողացաւ ժողովուրդը ազատել թշնամու ձեռքից և բաժանել հայ գիւղերի վրա. իսկ հարուստ Ղալաջուղը իր ցորեններին շտեմարաններովը, տները լի կահկարասիքներովը, բոլոր կարողութիւնովը մատնվեց գեհենի կրակին, որը այժմս կատարեալ աւերակ է: Ի՞նչ անենք, ո՞ւմ գանգատվենք, քանի որ լսող չը կայ մեր աղաչանքը, չը նայած որ բոլորն էլ յոյս են տալիս, մեր մաշված սրտերը հանգստացնում. բայց զուր յոյսեր են:

Գաւառապետը 300 կոզակներով եկաւ, անձամբ տեսաւ բոլորը ու կրկին վերադարձաւ Գորիս, պատասխանելով մեր աղաչանքին, թէ գնում եմ հեռագրեմ Կովկասի Փոխարքային, նորից նրա կարգադրութեամբ վերադառնամ և պատժեմ մեղաւորներին: Սակայն մինչև օրս ոչինչ չը կայ, և հայը դեռ ևս սպասում է գաւառապետի գալստեանը. բայց զուր. երկու օրից յետոյ նորից փոթորիկ, նորից արիւնհեղութիւն բարձրացաւ խեղճ գիւղացու գլխին. Ի՞նչ կը լինի արդեօք սրա վերջը: Յուլիսի 9-ի առաւօտեան ժամի 7-ին Սիսիանի գիւղից մի խումբ զինված Թուրքեր յարձակվում են Բռնունիս գիւղի տաւարի վրա՝ փախցնելու նպատակով: Բարեբախտաբար, տաւարածները շուտ են նկատում, դիմադրում են Թուրքերին. այդտեղ կռիւ է սկսվում, հրացանաձգութիւն է առաջանում. լուրը հասնում է գիւղը, որ Թուրքերը տաւարը փախցրին. իսկոյն մի քանի երիտասարդներ հասնում են կռւի տեղը. այդ ժամանակ Թուրքերը տեսնում են, որ գործերը չաջողվեց, փախուստ են տալիս մտնում իրանց սահմանի ծառաստանների մէջ և գնդակներով պատասխանում հայերին: Այդ հրացանաձգութեան ձայնին մօտակայ Թաղա գիւղից մի քանի տղերք դուրս են գալիս եղելութիւնը իմանալու. յանկարծ Սիսիանի գիւղից գալերով գնդակներ են թափվում մի բուռն անմեղ հայերի վրա. բարեբախտաբար այդ օրը բոլոր ժողովուրդը գիւղումն է լինում. այդ իմանալով Մ-ը, հաւաքելով գիւղի երիտասարդներին, գրաւում է շրջակայ դիրքերը, և այդտեղ պարզվում է, որ տաւարի վրա յարձակվելը ցոյց է. նրանց մտադրութիւնը Թաղա գիւղը բնաջինջ անելն է, որովհետև մեր դիրքերին հասնելն ու Թուրքերի չորս կողմից գիւղը պաշարելը մէկ եղաւ: Համարեա գիւղը այնքան էին պատել Թուրքերը, որ մի ելք չը կար, որ գոնէ կարելի լինէր շրջակայ գիւղերից օգնութիւն խնդրել. Ի՞նչ դրութիւն էր այդ րօպէն, Աստուած հեռու տանէ. գնդակները կարկուտի պէս էին տեղում հազարաւոր խուժանի բանակներից, բայց փոքրիկ Թաղա-գիւղը էլ չէր յուսահատվում. «կամ մահ կամ ազատութիւն» գոռալով, մի բուռն կտրիճներով, 30 հոգուց բաղկացած, առիւծաբար կռւում էին թշնամու դէմ ամբողջ չորս ժամ. անխիղճ Թուրքերը, չը նայած իրանց անթերի յարձակման, հազարաւոր խուժանով երեք անգամ «եա Ալի» գոռալով, սրերը մերկացրած, դիրքերից դուրս են գալիս, որ ամբողջ գիւղին սրախողխող անեն, բայց փոքրիկ խմբի գալերը թշնամուն հալածում են, լցնում իր որջերը: Մի կողմից կռիւն է շարունակվում, միւս կողմից քիւրդերը սարերից են գալիս հաւաքվում, որ ուժեղանան. այդ միջոցին Ղարաքիլիսայից գալիս հասնում է պրիստաւը 100 կոզակներով. այդ տեսնելով Թուրքերը՝ դիրքերից փախչում են, լցվում գիւղերը, որ իրանց ներկայացնեն ինչպէս մի հանգիստ ժողովուրդ. բայց այդ չաջողվեց Թուրքերին: Պրիստաւը ամեն մի եղելութիւնը ստուգեց, իմացաւ, միայն գործը յետաձգվեց մինչև գաւառապետի գալը: Նա մեզ խոստացել է արդարութիւնով, որ Սիսիանը պիտի աւերվի, որովհետև շատ անհանգիստ ժողովուրդ է: Արդեօք պրիստաւի խոստումը կը կատարվի՞. դրան էլ սպասենք, տեսնենք ինչ կը լինի. բայց յուսով ենք. այժմեան մեր պրիստաւը շատ արդարադատ մարդ է, կողմնապահութիւն չը գիտէ: Այդ կռւումը Թուրքերից սպանված են եօթը մարդ, իսկ հայերից ոչ մի զոհ. միայն մի աւանակ է գնդակահար եղել:

Գ. Գալստեան

—

Կարսի պարսից հիւպատոսը ուղարկել է Սադրազամին հետևեալ հեռագիրը Շահի ծննդեան տօնի առիթով.

Նորին Բարձր Գերազանցութեան Ազա Մուշիր-ուլ-Դովլէ Սադրի-Ազամին.

«Բոլոր հաւատարիմ հպատակների հետ միասին ի սրտէ շնորհաւորում ենք Նորին Կայսերական Մեծութեան ծննդեան մեծաշուք տօնը: Յայտնում եմ նմանապէս Կարսի վիճակի փոխանորդի և հայ հասարակութեան ի սրտէ շնորհաւորութիւնները Շահն-Շահի ծննդեան տօնի առիթով:»

Հեռագրի պատասխանը.

Կարս, պարսից հիւպատոսին.

«Ձեր, հայոց վարդապետի և հայ հասարակութեան շնորհաւորութիւնները զեկուցի Նորին Կայսերական Մեծութեան, որը շատ հաճելի տպաւորութիւն թողեց Շահն-Շահի վրա»:

Սադրի-Ազամ

—

Ինչպէս լսում ենք, Սուրմալուի գաւառական ոստիկանութեան քարտուղար Մամադ Ալիօղլին և Ալիքուչակի հասարակութեան գլաւա Համիդ-բէգ Շամշադինովը գաւառապետ Եօնինի կողմից հեռացված են իրանց պաշտօնից: Այդ կարգադրութեան համար Սուրմալուի ազգաբնակութիւնը երախտիքով լցված է դէպի գաւառապետ Եօնինը, որովհետև նա ճիշտ ըմբռնեց իւրեի դրութիւնը և յիշեալ անձնաւորութիւնների ակներև վտանգաւորութիւնը ժողովրդի համար. Շամշադինովի փոխարէն, որը հալածում, ճնշում էր եզիդիներին և լարում հայ-Թուրքական յարաբերութիւնները, գաւառապետը Ալիքուչակի գլաւա նշանակեց եզիդի Ջաւաեգա Իսքաշիօղլուն, որը տխրահռչակ Բօղուսլաւսկուց առաջ 18 տարի գլաւա էր եղել և մեծ յարգանք էր վայելում ազգաբնակութեան մէջ իր անկաշառ, համեստ ու ազնիւ բնաւորութեամբ:

—

ՆՈՒԽԻՑ մեզ գրում են. «Անցեալ տարի այստեղի մի քանի շէխ Թուրքեր մեծ փող վաստակեցին՝ իրանց գործակիցների ձեռքով կողոպտել տալով Եւլախի կայարանը: Այդ միևնոյն Թուրքերը շատ աշխատեցին Նուխում էլ խառնակութիւն առաջ բերել, բայց շնորհիւ սիւննի Թուրքերի խոհեմութեան, չաջողվեց: Դրանց զրկելու համար այժմ Նուխի եկած են բաւական թւով ղարաբաղցի Թուրքեր: Թէ քաղաքի մէջ և թէ դրսում, Թուրք խուլիգաններից աւազակային խմբեր են կազմվել, որոնք սպառնական դիմումներով, նամակներով բոլորից փողեր են հաւաքում: Այս օրերս Նուխուց Եւլախ գնացող կառքերը, թւով 7 կողոպտվել են, ինչպէս և պօստային հանրակառքը: Շատ վտանգաւոր է դարձել և հաղորդակցութիւնը Եւլախի և Զաքաթալայի հետ:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

—

Կովկասում գտնվող պարսկահպատակ հայերը, իրանց ուրախութիւնը և հրճուանքը արտայայտելու համար Պարսկաստանի ժողովրդին (և նրա հետ հայերին էլ) սահմանադրական իրաւունքներ պարգևելու առիթով, ինչպէս հաղորդվեց «Մշակի» մէջ, մի քանի քաղաքներում, ուր կան պարսկահպատակ հայեր—Երևան, Կարս, Բաթում—մաղթանքներ կատարեցին: Նոյն ցանկութիւնը ունեցան և Թիֆլիսում բնակվող պարսկահպատակ հայերը և այդ մասին հեռագրով խնդրեցին Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին թոյլատրել մաղթանք կատարել Վանքի մայր եկեղեցում: Երէկ. «Մշակի» խմբագրութիւնը ստացաւ հետևեալ հեռագիրը դիւանապետ Տաճատ վարդապետից.

«Նորին Սրբութիւնը թոյլատրում է կատարել մաղթանք ըստ խնդրանաց պարսկահպատակ հայերի Նորին Մեծութիւն Շահի կողմից սահմանադրական իրաւունքներ պարգևելու առիթով»:

Այդ հիման վրա Թեմի առաջնորդի կարգադրութեամբ, վաղը, շաբաթ, առաւօտեան ժամը 11-ին կը կատարվի մաղթանք Վանքի մայր եկեղեցում:

ՀԱՄԱԿՐՈՒԹԵԱՆ ՑՈՅՑԵՐ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

—

Անգլիական առաջին մինիստր Կէմպբել-Բաններմանի «Դումա մեռաւ, կեցցէ Դումա» բացականչութիւնը արձագանք գտաւ եւրոպական բոլոր երկիրների առաջադէմ շրջաններում: Ամեն տեղ միտինգներ և ցոյցեր են կազմակերպվում, Պետական Դումայի նախկին անդամներին և Ռուսաստանի ժողովրդին համակրութիւն արտայայտելու նպատակով:

Այդ տեսակէտով, ինչպէս երևում է, առաջին տեղը բռնում է Անգլիան, որտեղ ժողովուրդը մի առանձին համակրութիւն է ցոյց տալիս դէպի մեր երկրի ազատագրական շարժումները և մեծ հետաքրքրութեամբ է հետևում օրէցօր կատարվող դէպքերին: Եւ դա շատ հասկանալի է: Բացի նրանից, որ անգլիացիները առհասարակ վերին աստիճանի նրբազգաց են դէպի բոլոր տանջվող ժողովուրդների տառապանքները և կողմնակից նրանց ազատագրական շարժումներին, Ռուսաստանի վերաբերեալ նրանք և ուրիշ շարժառիթներ ունեն, նրա ազատագրութեանը կողմնակից և համակրող լինելու: Քաղաքականապէս իբրև չափազանց զարգացած և գիտակից ժողովուրդ, անգլիացիք շատ լաւ են հասկանում, թէ ինչպիսի դամոկլեան սուր է եղել ռուս բիւրոկրատիայի աշխարհակալական քաղաքականութիւնը իրանց կօլոնիական քաղաքականութեան համար: Ռուս բիւրոկրատիայի այդ քաղաքականութեան պատճառով, Անգլիան ստիպված է տարեկան մի քանի միլիոն աւելորդ ծախսեր անել, իր ասիական սահմանները՝ Հնդկաստանը, Տիբէթը, Աւղանիստանը և այլ տեղեր ապահով դրութեան մէջ պահելու համար: Մինչդեռ բիւրոկրատիայի պարտութեամբ այդ, թէ Ռուսաստանի ժողովրդին խիստ սուղ նստող ու ոչինչ չը տուող և թէ օտարներին միշտ սպառնացող ու վնասող քաղաքականութեանը, գոնէ բաւական երկար ժամանակով, վերջ կը դրվի:

Այդ բանը շատ լաւ են հասկանում անգլիացիք, և հէնց այդ հանգամանքը աւելի ևս հետաքրքրութիւն ու մասնաւոր համակրութիւն է զարթեցնում նրանց մէջ դէպի Ռուսաստանի յեղափոխական շարժումները և մի որոշ չափով նրանց շահագրգիռ է դարձնում դէպի այդ յեղափոխութեան կատարեալ յաջողութիւնը:

Լօնդօնում անգլիական հասարակութեան ամենաականաւոր ներկայացուցիչներից մի մասնաւոր կօմիտէտ է կազմվել, որը ստորագրութիւններ է հաւաքում անգլիական ժողովրդի կողմից Պետական Դումայի նախկին անդամներին ուղարկվելիք համակրական ադրէսի համար: Այդ ադրէսի տակ արդէն ստորագրել են բազմաթիւ քաղաքական գործիչներ, գեղարուեստի ու գիտութեան ներկայացուցիչներ և եկեղեցու պաշտօնեաներ:

Սակայն ոչ սակաւ հետաքրքրութիւն ու համակրութիւն են ցոյց տալիս եւրոպական և միւս երկիրներում:

Ֆրանսիայում Պետական Դումայի անդամներին համակրութիւն արտայայտելու կազմակերպութիւնը իր վրա է վերցրել «Ռուս ժողովրդի բարեկամների ընկերութիւնը», որի գլուխն են կանգնած աշխարհահռչակ անձնաւորութիւններ, ինչպէս են՝ Անատոլ Ֆրանսը, պատմաբան Սենիօբոսը, դրամատուրգ Օկտաւ Միրբօ, պրոֆեսոր Լանժըլուա, ակադեմիկ Ավէ և շատ ուրիշ ոչ պակաս յայտնի քաղաքական ու հասարակական գործիչներ:

Այդ ընկերութեան նախագահ Անատոլ Ֆրանսը վերջերս Պարիզի խմբագրութիւններին հետեւեալ կոչն է ուղարկել, ուղղուած ֆրանսիական ժողովրդին.

«Բրիտանական կենտրոնական «Des Bleus» կոմիտէտը պատիւ ունի խնդրելու ռուս ժողովրդի բարեկամների ընկերութեան կոմիտէտին՝ իր հիացմունքը յայտնել Դումայի այն անդամներին, որոնք Վիբորգի բողոքագրի տակ ստորագրեցին, նրանց քաջարի վարմունքի համար։ Միենոյն ժամանակ կոմիտէտը ցանկութիւն է յայտնում, որ ի նկատի առնելով ֆրանսիական պարլամենտի արձակուրդները, բոլոր հանրապետական խմբերը իրանց վրա վերցնեն ֆրանսիական դեմոկրատիայի տրամադրութիւնը արտայայտողների դերը և իրանց համակրութիւնը յայտնեն Ռուսաստանի առաջին պարլամենտի ազատամիտ ներկայացուցիչներին։ Պատուաւոր նախագահ Բեվէյիր, ակադեմիկ Րիբօ, նախագահ Դայօ»։

Իր կողմից «Ռուս ժողովրդի բարեկամների ընկերութիւնը» իր Պարիզի սեկրետարիատում սկսել է դիմումներ և տեղեկութիւններ հաւաքել, Դումային համակրութիւն արտայայտելու վերաբերեալ։

Լիօնում «Մարդու իրաւունքների լիգա»-ն բանկետ է կազմակերպել, որտեղ լիգայի անդամների կողմից համակրութիւն է արտայայտուել Ռուսաստանի Պետական Դումայի անդամներին ու ժողովրդին։ Հռետորներից մէկը ցանկութիւն է յայտնել, որ ֆրանսիական կառավարութիւնն էլ անգլիական մինիստր նախագահ Կէմպբել-Բաններմանի նման իր համակրութիւնը յայտնէ Դումային։ Ժողովը ողջունել է աղմկալից ցոյցերով և «ուռա» բացականչներով ի պատիւ Դումայի և ռուս ժողովրդի։

Մեզանում էլ սօցիալ-ռադիկալ և հանրապետական խմբերի ներկայացուցիչների ժողով է տեղի ունեցել, քննելու համար թէ ինչ միջոցներով կարելի է աջակցութիւն ցոյց տալ ռուս ժողովրդին, նրա ազատագրական շարժման ու իրաւական կարգ հաստատելու մէջ։ Ներկայ էին շատ պատգամաւորներ։ Պրօֆեսոր Րիկիերի, անդամ Միլանի գիտութիւնների ակադեմիայի, մի ընդարձակ ճառ խօսեց Ռուսաստանի անցքերի մասին։ Ի միջի այլոց, նա մատնանիշ արեց այն վտանգը, որ կարող են առեղծել Գերմանիան ու Աւստրիան, եթէ նրանք աջակցութիւն ցոյց տան Ռուսաստանի ռէակցիային։

Հռետորի կարծիքով, եթէ ռէակցիան յաղթող հանդիսանայ Ռուսաստանում, դրանից կարող է վտանգուել բոլոր եւրոպական ժողովուրդների ազատութիւնը։ «Secolo» թերթի խմբագիր Րօմուսի ռէզոլիւցիա մտցրեց՝ Իտալիայի համակրութիւնը յայտնել ռուս ժողովրդին։ Պատգամաւոր Տուրատի առաջարկեց ձախակողմեան կուսակցութիւնների ժողով կազմել և միաժամանակ մի շատ մեծ հասարակական միտինգ գումարել ի պատիւ Ռուսաստանի ազատագրական շարժման։ Ժողովի վերջում Տուրատի առաջարկութիւնը ընդունուեց՝ համակրութիւն յայտնել Դումային և բողոքել նրան ցրուելու դէմ։

Յետամնաց Սպանիան էլ այդ համակրական շարժումներից յետ չէ մնացել։ Բարսելօնում յուլիսի 29-ին բացուել է հանրապետականների միջազգային կօնգրէսը, որին մասնակցում էին Ֆրանսիայի, Պորտուգալիայի և Իտալիայի պատգամաւորները։ Նախագահ է ընտրուել մի իտալական պատգամաւոր, որը, բանալով ժողովը, առաջարկել է Ռուսաստանի Պետ. Դումայի անդամներին համակրութեան ադրէս ուղարկել, և այդ առաջարկը միաձայնութեամբ ընդունուել է ժողովի կողմից։

Այս բոլոր համակրական ցոյցերը ընդդէմ բիւրօկրատիայի և նպաստ մեր ազատագրական շարժումների, ի հարկէ, զուրկ չեն լինի նշանակութիւնից։ Դրանք առնուազն աւելի ու աւելի կը գցեն մեր կառավարութեան բարոյական ու մանաւանդ ֆինանսական վարկը և սաստիկ կը դժուարացնեն նրա թէ նոր փոխառութիւն անելուն և թէ նախկինի օբլիգացիաները ծախելուն։ Իսկ դա ամենամեծ հարուածն է սնանկութեան նախօրեակում գտնուող կառավարութեան համար։

Ռ.

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—Օգոստոսի 3-ին Կրասնօէ-Սելօյում մանրամասն զեկուցում է տրուել լեհական թագաւորութեան մէջ կատարուող մասսայական սպանութիւնների և երկրի մէջ վերջին ժամանակներս առեղծուած իրերի ընդհանուր դրութեան մասին։ Անմիջապէս բացատրութիւններ են պահանջուում պրեմիէրից, որը այդ առիթով խորհրդակցութիւն է ունեցել ոստիկանական դեպարտամենտի պետի հետ։ Ինչպէս տեղեկացել է «Р. В.» լրագիրը, օգոստոսի 3-ին արտակարգ նիստ պէտք է կազմէր և մինիստրական խորհուրդը՝ գեներալ Սկալօնին յետ կանչելու հարցի մասին խորհելու։ Այդպիսի միջնորդութիւն իր ժամանակին յարուցել էին Վիտտէն և Գօրեմիկինը, բայց պարլամենտական շրջաններում կարողացել էին պաշտպանել Վարշավայի գեներալ նահանգապետին և նա մնաց իր պաշտօնում։

—Ներքին գործերի մինիստր Ստոլիպինը ուղարկել է նահանգապետներին հետեւեալ շրջաբերականը. «Ներքին գործերի մինիստրութեան մէջ ստացուած տեղեկութիւններից երեւում է, որ ներկայումս շատ նահանգներում գիւղական բանուորները գործադուլներ են սարքում, որպէս զի հարկադրեն հողատէրերին վճարելու գործադուլ անողների կողմից նշանակուած վարձերը, որ չափից դուրս բարձր են լինում։ Իրանց այդ նպատակին հասնելու համար տեղական գիւղացիները երբեմն իրանց թոյլ են տալիս բռնի միջոցների դիմելու, հեռացնելով ուրիշ տեղերից եկած աշխատող բանուորներին և այդպիսով ոչ մի հնարաւորութիւն չեն տալիս հողատէրերին իրանց տնտեսութիւնը շարունակելու։ Աչքի առաջ ունենալով, որ այդպիսի բռնութիւնները, թէկուզ հէնց տնտեսական շարժառիթներից դրդուած, արդարութեամբ հասարակական բնաւորութիւն են ստանում և հասարակական տեսակէտից անթոյլատրելի են, յանձնարարում եմ ձեզ գիւղացիութեանը համապատասխան կարգադրութիւններ անել յիշեալ ապօրէն երեւոյթներին արագութեամբ և վճռական կերպով վերջ տալու համար։ Այդ ուղղութեամբ աջող հետեւանքների հասնելու նպատակով անհրաժեշտ է պահանջել ոստիկանական պաշտօնեաներից, որ նրանք աչալուրջ կերպով հետեւեն գիւղացիների մէջ կատարուող ամեն երեւոյթներին, և ամենափոքր խլրտումների դէպքում ձեզ իսկոյն զեկուցանեն, որպէս զի դուք հնարաւորութիւն ունենաք ամեն մի խառնակութիւն սաղմի մէջ խեղդելու և վերականգնելու ձեր իրաւասութեան ներքոյ դրուած նահանգի խաղաղութիւնը։ Եթէ յուզմունքները սուր կերպարանք կը ստանան, այն ժամանակ օրինական պատասխանատուութեան պէտք է ենթարկել յանցաւորներին։ Բացի դատաստանական միջոցներից, պէտք է աշխատել գտնել շարժման պարագլուխներին և, խնամքով ստուգելուց յետոյ, կալանաւորել և ադմինիստրատիվ կարգով աքսորել գոյութիւն ունեցող օրէնքների հիման վրա։ Ամեն տեսակ բռնի և ապօրէն գործողութիւններին պէտք է խիստ դիմադրել և անողորմ հարուած տալ ոստիկանական և զօրքի ույժերով։ Ձեռք առնուած բոլոր միջոցները գլխաւորապէս նպատակ պէտք է ունենան մասսայական անկարգութիւնների առաջն առնելու։ Իւրաքանչիւր անկարգութեան դէպքում ճնշել նրան հէնց սկզբնաւորութեան մէջ, առանց թոյլ տալու նրան մեծ ծաւալ ստանալ և զրկել նրան վերսկսելու հնարաւորութիւնից»։

(«Бирж. Вѣд.»)

—Օգոստոսի 2-ին երդ. հաւատ. Պերեվերզեւը, որ հրաւիրուած էր պաշտպանելու Կրօնշտադի ապստամբութեանը մասնակցողներից մի քանիսին, դիմեց Կրօնշտադի կօմենդանտի պաշտօնավարին խնդրելով թոյլ տալ իրան տեսնուելու մեղադրուողների հետ։ Կօմենդանտը մերժեց, հիմնուելով ստացուած հրամանի վրա, որով արգելւում է թոյլ տալ քաղաքացիական պաշտպանին այդ գործի համար այցելել ոչ զինուորական և ոչ էլ քաղաքացի կալանաւորներին։ («Р. В.»)

—Պետական Դումայի անդամ Օնիպկօն, որ կալանաւորուած է Կրօնշտադում, մինչեւ այժմ էլ դեռ չէ ստացել մեղադրական ակտը, և նրա գործը չէ էլ քննուել։ Որովհետեւ Օնիպկօն կալանաւորուած է փողոցում, այդ պատճառով երեւի նրան չեն դատի նաւաստիների հետ միասին։ Նրա մեղաւորութեան և ապստամբութեանը մասնակցելու աստիճանի հարցը դեռ չէ լուսաբանուած։ («Р. В.»)

—Յալտայից հաղորդում են «Р. В.» լրագրին, որ այդտեղ ոստիկանութիւնը խուզարկութիւն է կատարել կադետական բիւրօյի երկու անդամների և քարտուղարի բնակարաններում, և ոչինչ չէ գտնուել։ Ազգաբնակութիւնը չափազանց վրդովուած է, ասելով թէ ինչպէս մի քանի շրջաններ ձգտում են Հարաւային ափերում, օգտուելով ռումբերի դէպքից, զինուորական դրութիւն մտցնել, որը ջերմուկների համար կործանարար կարող է դառնալ՝ տնտեսական վնասների մտքով։

—Ֆինլանդական սենատը որոշել է վերջ տալ կարմիր գվարդիային, որը Կրօնշտադի անցքերի ժամանակ այնքան աղմուկի ու արիւնահեղութեան պատճառ դարձաւ։ Սենատը չէր կարող այլ կերպ վարուել այն բոլորից յետոյ ինչ որ տեղի ունեցաւ, բայց դրանից չը պէտք է շտապ եզրակացութիւն հանել, որ այսուհետեւ գործերը կընթանան աւելի լաւ, ինչպէս հարկն է։ Կասկածում եմ, ասում է «Р. В.»-ի թղթակիցը, որ կարմիր գվարդիան իսկապէս չքանայ։ Գոնէ մի առժամանակ նա կը մնայ, բայց այլեւս ոչ թէ իբրեւ լեգալ կազմակերպութիւն, այլ գաղտնի։ Անիշխանական տարրերը, որ մինչեւ այժմ զսպւում էին չափաւոր մեծամասնութեան կողմից, գաղտնի վիճակում գերակշռող կը հանդիսանան։ Իբրեւ արդիւնք մի յայտնի ընդհանուր պայմանների, կարմիր գվարդիան կը պահպանէ իր գոյութիւնը մինչեւ այն ժամանակ, երբ ժողովրդական զգացմունքները ուրիշ ելք կը գտնեն իրանց համար։ Ոստիկանական միջոցները այդտեղ անզօր են բոլորովին։ Ներքին երկպառակութեան, եղբայրասպան ընդհարման գլխաւոր շարժառիթը կարմիր գվարդիայի ձգտումներին հակադրելու համար նոր կազմակերպուած սպիտակ գվարդիան էր, որը կարմիր գվարդիայի հետ ընդհարուելուց անմիջապէս յետոյ ինքն իրան արձակեց, յայտարարելով. «Մեր նպատակն էր կարգը և խաղաղութիւնը պահպանել և թոյլ չը տալ, որ ռուսաց զօրքերը միջամտեն։ Բայց որովհետեւ մեր այդ նպատակը չիրագործուեց, մենք ցրւում ենք»։ Արդէն Հելսինգֆօրսի փողոցները հեղեղուած էին ռուսաց զօրքերով, և կօզակների մտրակները շառաչում էին օդում։ Այդ բոլորից յետոյ սենատը հարց է բարձրացնում ֆիննական գնդերը վերակազմելու մասին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—Ներկայումս, ինչպէս հաղորդում է «Бирж. Вѣд.» լրագիրը, ներքին գործերի մինիստրի օգնական Կրիժանովսկու բնակարանում տեղի են ունենում Պետական Դումայի օրէնքները վերաքննելու համար յատուկ կազմած խորհրդակցութեան նիստերը։ Այդ խորհրդակցութիւնների մէջ կը մշակուի ընտրութիւնների նոր եղանակը։ Ինչպէս ասում են, խորհրդակցութեան անդամներից ոմանք այն կարծիքն են յայտնում, որպէս զի նոր Դուման գումարելիս գործադրուեն համեմատական ընտրութիւններ։

—Այն հարցին, թէ որքան ստոյգ են արտասահմանեան մամուլի առած տեղեկութիւնները, որ իբրեւ թէ Պետական Դումայի նոր ընտրութիւնները նշանակուած են սեպտեմբեր ամսում, պրեմիէր-մինիստրը, «Товарищъ» լրագրի ասելով, պատասխանել է, որ ընտրութիւնները սեպտեմբերին դեռ տեղի չեն ունենալու։ Ընտրութիւնների ժամանակամիջոցը կախուած է ուրիշ շատ հանգամանքներից։

—Ներքին գործերի մինիստրը չէ վաւերացրել Պետերբուրգի քաղաքային դումայի պահանջը՝ քաղաքի կողմից Պետական Դումայի ընտրութիւնների համար կատարուած 84,000 րուբլու ծախքը վճարելու։ Օգոստոսի 3-ի իր նիստում դուման միաձայն վճռել է մինիստրի այդ վարմունքի դէմ վճռաբեկ բողոք ներկայացնել կառավարիչ սենատին։ «Пет. Л.»

—Լեհական թագաւորութեան գիւղացիների կողմից պատգամաւոր ուղարկուած Պետական Դումայի նախկին անդամ Նակօնեչնու կեանքի դէմ, «Нов. Вр.» լրագրի ասելով, մօտ ժամանակներս անյայտ անձինք մահափորձ են կատարել։ Մի քանի մարդիկ ներս են խուժում Նակօնեչնու բնակարանը, պահանջելով տանտիրոջը. բայց վերջինս պատահաբար գտնուում էր ուրիշ տեղ։ Չը հաւատալով դրան, չարագործները ամբողջ գիշերը հսկում էին բնակարանին մօտիկ։ Նրանց ամբողջ խօսակցութիւնից պարզ կերպով երեւում էր, որ չարագործները վճռել են սպանել Նակօնեչնուն նրա համար, որ նա պատկանում է լեհական ազգային կուսակցութեանը։

—Պետական Խորհրդի անդամների մեծ մասը, «Народъ» լրագրի ասելով, գնում է դէպի արտասահման և իւրաքանչիւրը ոչ պակաս քան երկու ամիս ժամանակամիջոցով։ Դրա շնորհիւ նրանց գումարուիլը Պետերբուրգում չէ սպասուում առայժմ։ Պետական Խորհրդի անդամները արտասահմանից կը սկսեն վերադառնալ նոյեմբերի 1-ից։

ՓԱՐԱՋԱՒՈՐ ԲԻՒՐՕԿՐԱՏԻԱՆ

Անշուշտ յիշում են ընթերցողները, որ Պետական Դումայում բաւական թւով քահանայ պատգամաւորներ կային, որոնցից մի քանիսը, նամանաւանդ գիւղական քահանաները, բոլոր քննուող հարցերի վերաբերեալ ձախակողմեանների կողմն էին անցած և շատ խիստ ու քննադատական լեզուով էին խօսում թէ հին ռեժիմի և թէ արդի կառավարութեան դէմ։ Այդ բանը, ի հարկէ, սաստիկ դուր չէր գալիս «խաղաղ ռուս և ուղղափառ» բարձր հոգեւորականներին, որոնք սակայն, քանի որ Դուման գոյութիւն ունէր, ձայները իրանց էին քաշել և բաւականանում էին միմիայն ատամների խուլ կրճտոցով։

Բայց հէնց որ Դուման փակուեց, հէնց որ պատգամաւոր քահանաները դադարեցին անձեռնմխելի ժողովրդային ներկայացուցիչ լինելուց, այդ բարձրաստիճան սուրբ հայրերի լեզուն ու թեւերն էլ իրանց կատարելապէս ազատ զգացին։ Այժմ օր չէ անցնում, որ այդ արքեպիսկոպոսների խմբագրած «սրբազան» թերթերում չը կշտամբուեն ու չը հայհոյուեն դեռ երէկուան պատգամաւոր քահանաները, որոնք մեղադրւում են, ի հարկէ, Աստուծոյ և աւետարանի հակառակ ընթացք ունենալու մէջ։

Դա, ի հարկէ, չափազանց բնորոշ և միանգամայն համապատասխան է բոլոր երկիրների ու եկեղեցիների բարձր հոգեւորականութեան վարմունքին, որը ամեն տեղ և ամեն ժամանակ միշտ մարմնաւոր իշխանութեան ամենահաւատարիմ նեցուկն ու համագործակիցն է եղել, իբրեւ պարագլուխ, դժբաղդ ժողովրդի ամենակենսական հիւթերը ծծելու գործում։ Որտեղ անհնարին է եղել մարմնաւոր իշխանութեան ձեռքի տակ եղած միջոցներով ժողովրդին հնազանդութեան բերել, բթացնել և ստրկացնել, այնտեղ իսկոյն օգնութեան են հասել սուրբ հայրերը և Աստուծոյ, Քրիստոսի և այլ անթիւ ու անհամար սուրբերի անունով են լրացրել մարմնաւոր իշխանութեան թողած պակասը։

Յունադաւան բարձր հոգեւորականութեան վերոգրեալ վարմունքը մասնաւորապէս սաստիկ բնորոշ ու համապատասխան է մանաւանդ ռուս հոգեւորականութեան ոգուն, որը հէնց սկզբից ի վեր, ամբողջ դարերի ընթացքում, երբեք ինքնուրոյնութիւն չէ ունեցել և միշտ մարմնաւոր իշխանութեան ամենահլու սպասաւորն է եղել, նրա ոստիկանական դեպարտամենտի մի հարազատ ճիւղը։ Հետեւապէս նա չէ կարող երեւակայել անգամ, թէ ինքը, առանց բռնապետական միապետութեան, կարող է գոյութիւն ունենալ։

Ռուսաց բարձրաստիճան հոգեւորականութիւնը այն աստիճան ոգեւորուել ու առաջ էր գնացել իր ժրաջան հաւատարմութեան մէջ, որ նա, չը բաւականանալով մարդկային վերջին ծայր ինքնահաւանութիւնից ու ստախօսութիւնից բղխած ինքնաաստուածացումով, որի հիման վրա, «Աստուած իր պատկերով ստեղծեց մարդը» ասելով, մարդիկ ցանկանում են, որ իրանք անպատճառ աստուածային կերպարանք ունենան կամ մի-մի աստուածներ լինեն, չը բաւականանալով,—ասում ենք,—այդ ինքնաաստուածացումով, ռուսաց հոգեւորականութիւնը աստուածացրել կամ աստուածային էր դարձրել և Ռուսաստանի բռնապետական միապետութիւնը։ Ամբողջ դարերի ընթացքում այդ սուրբ հայրապետները շարունակ երկնային թագաւորութիւնը նկարագրում ու ներկայացնում էին ճիշտ այնպիսի հիմունքներով ու վարչական ձեւով կազմուած, ինչպիսին էր Ռուսաստանի բռնապետական միապետութիւնը։ Եւ դրանց լսող ու հաւատացող դժբաղդ ժողովուրդը յաճախ շփոթւում ու չէր կարողանում հասկանալ, թէ արդեօք երկնային իշխանութիւնն են Ռուսաստանից այդ կառավարչական ձեւը վերցրել, եթէ ոչ՝ Ռուսաստանն է իր պաշտօնական սիստեմը, գաղտնի ու յայտնի ոստիկանական շտատները և այլն երկնքից ընդօրինակել։ Այնուամենայնիւ մի բան շատ պարզ էր մնում այդ ժողովրդի համար, այն է՝ որ Ռուսաստանի կառավարչական ամբողջ կազմն ու ձեւը մի ինչ որ աստուածային գործ է, որի դէմ խօսելն ու գործելը ամենամեծ յանցանք կարող է համարուել ոչ միայն «ի վերայ երկրի», այլ և «յերկինս»։

Կրկնում ենք, ամբողջ դարերի ընթացքում այդպիսի դեր ունենալուց յետոյ, ռուս կղերը ինչպէս կարող էր սառնասրտութեամբ ու համբերատարութեամբ նայել, թէ ինչպէս մի քանի «ընդոստ» գիւղական քահանաներ դուրս են եկել ու պնդում են, թէ սահմանադրական կարգերը աստուածային կամքի հակառակ բաներ չեն, թէ ազնուականութիւնը կարելի է վերացնել և ազնուականների հողերը խլելով գիւղացիներին տալ, ամնիստիա հրապարակել, մահուան պատիժը վերացնել և այլն, և այլն, առանց Աստուծոյ կամքին հակառակ մի գործ կատարած լինելու։ Զի՞ որ այդ պահանջներով միանգամայն հերքւում էին կղերի բոլոր մինչեւ այժմ քարոզածներն ու ասածները։

Կղերը զայրացաւ, փրփրեց ու կատաղեց։ Սակայն սուրբ հայրերը չեն բաւականանում միայն սրբազան հայհոյանքներով. նրանք մի առանձին հեռատեսութիւն էլ են ցոյց տալիս ապագայի վերաբերեալ և միջոցներ են մտածում, որ ապագայ Պետական Դումայումն էլ նոյն «խայտառակութիւնները» չը կրկնուեն։ Իսկ դրա համար նրանք առաջարկում են բարեփոխութիւններ ենթարկել ընտրողական օրէնքը, գոնէ, հոգեւորականների վերաբերեալ։ Սուրբ միապետականների ցանկութեան համաձայն, ապագայում նախ՝ այն հոգեւորականներին թոյլ տալու է պատգամաւոր ընտրուելու, որոնց «խելքի ու խղճի մասին» ուղղափառ եկեղեցու բարձրագոյն իշխանութիւնը յատուկ վաւերացումն տուած կը լինի», և ապա՝ նրանք ցանկանում են, որ եկեղեցական իշխանութիւնը իրաւունք առնէ «իր միջոցներով ձայնի իրաւունքից զրկել Դումայում անհնազանդ հոգեւորական հռետորներին», այլ խօսքերով՝ իրաւունք տայ որ և է ժամանակը կարգալոյծ անել անհնազանդ քահանայ-պատգամաւորներին, որից յետոյ, ըստ Պետական Դումայի կազմի մասին եղած օրէնքների, պատգամաւորը կը զրկուի իր ցենզից, իբրեւ հոգեւորական, և ուրեմն նաեւ կը զրկուի պատգամաւոր լինելու իրաւունքից։

Ինչպէս տեսնում էք, չափազանց հնարագէտներ են սրբացած ոստիկանները և, ի հարկէ, նրանք կը հասնեն իրանց նպատակին։ Սակայն, այդպիսի փոքրիկ նպատակների հասնելով, նրանք, պէտք է յուսալ, շատ շուտով կը կորցնեն իրանց ժողովրդի վրա շարունակաբար իշխելու և տիրապետելու ամենամեծ նպատակը։ Կղերի կողմից այդպիսի հակաժողովրդային վարմունքներ տեսնելով, շատ բնական է, որ ժողովուրդը շատ շուտով կըսթափուի և զզվանքով երես կը դարձնի ոչ միայն կղերից, այլ և եկեղեցուց ու այն բոլոր սրբերից, որոնց անունով իրան ամբողջ դարեր շահագործել ու բթացրել են։

Եւ հասունութեան ու գիտակցութեան հասած այդ օրը ժողովրդի իսկական փրկութեան մօմենտը կը լինի։

Թող, ուրեմն, սուրբ հայրերը արագացնեն այդ մօմենտը։

Խ.-Ազատ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ղազախի գաւառ, օգոստոսի 7-ին

Մի ժամանակ «Ալիք»-ում մի օտարոտի նամակ կար, որի մէջ մէկը գլխին զօռ էր տալիս և գրել թէ՝ ղազախեցիք էջմիածնի համագումարի համար յարմարաւոր մարդ չունեն, ուստի պէտք է պատգամաւոր ընտրեն բժիշկ պ. Յովհ. Տէր-Միքայէլեանին։ Բայց բանից դուրս եկաւ, որ երկու պատգամաւորն էլ Ղազախի գաւառից ընտրուեցին պ. պ. Սամսոն Յարութիւնեանց և Արշակ Թումանեանց (շամշադինեցի)։ Ղազախի ա. մասում թէեւ դաշնակցականները իրանց յատուկ «ոյժով» ընտրել էին պ. Տէր-Միքայէլեանին, բայց այդ ապօրէնի ընտրութիւնը բեկանուեց և հետեւեալ անգամ ընտրուեց պ. Ս. Յարութիւնեանց, որին ցանկանում են պատգամաւոր ունենալ շատ շատերը, նոյնը ցանկանում էր և մեր գաւառը։

Սեդրակ

—

«Նոր Կեանք» թերթի № 6-ում կարդում ենք, որ Նախիջեւանի և Բեսարաբիայի թեմից պատգամաւորներ ընտրելու համար Նոր-Նախիջեւանում գումարուած պատուիրակների ժողովը գաղտնի քուէարկութեամբ կատարել է 3 պատգամաւորների ընտրութիւն։ Քուէարկուել են—Յարութիւն Թումանեան (ստացել է 30 սպիտակ, 13 սեւ), Պօղոս Ջաւարեան (27 սպիտակ, 16 սեւ), Գէորգ սարկաւագ Ջէօրէքչեան (23 սպիտակ, 20 սեւ), Համբարձում Տէրտէրեան (19 սպիտակ, 24 սեւ), Աւետիս Ահարոնեան (17 սպիտակ, 26 սեւ) և Գրիգոր Յովսէփեան (15 սպիտակ, 28 սեւ)։ Աւետիս Ահարոնեանի թեկնածութիւնը առաջարկել է Գր. Զալխուշեանը, բայց, ինչպէս տեսանք, չէ անցել։ Ընտրուել են պատգամաւորներ առաջին երեքը։

—

Իգդիրում, պատուիրակների ընտրութեան օրը, նախկին վարժուհիներից մէկը, տիկին Մարգարիտ Կոնոյեան, եկեղեցու բակում ամերիկական ձեւով տրիբունա էր սարքել և իր շուրջը հաւաքելով Իգդիրի ընտրութեան մասնակցող կանանց, սկսել է ճառել Կաթողիկոսի տուած կօնդակի վնասակարութեան մասին։ Առաջարկել է կանանց հրաժարուել ընտրութեան իրաւունքից, որովհետեւ կօնդակի իրագործումով կը խախտուեն հայ եկեղեցու սկզբունքները, կը վերանայ ամուսնութիւնը, պսակը, հաղորդութիւնը, կնունքը, ապահարզանը և կը տարածուի բազմակնութիւնը։ Մի ուրիշ տիկին էլ, Հայրապետեան ազգանունով, բարեհաճել է «թէթեւ» հարուածներ տալ օրիորդ Աստղիկ Նազարեանին, որը համարձակութիւն է ունեցել իր համակրանքը արտայայտել կօնդակի պաշտպանութեան առիթով արտասանուած ճառին։ Ի հարկէ, այս փաստերը անկարող եղան համոզել Իգդիրի կանանց սեռին իրանց ընտրողական իրաւունքից հրաժարուելու և նրանք կատարեցին իրանց պարտականութիւնը։ Սակայն մարդ ապշում է թէ ինչպէս կրթուածի համբաւ վայելող մի տիկին, այն էլ նախկին վարժուհի, ընդունակ է յափշտակուելու ռէակցիայի տենդով և անհեթեթ տարրական ճշմարտութիւնները խեղաթիւրելու։ Կղերականութեան օրգանի մէջ սնուող պահպանողականները անցնում են իրանց ուսուցիչներից. դա պահպանողականների համար, գուցէ, առաջադիմութիւն է, բայց առաջադիմականների համար յետադէմ շարժում։

Դ.

ՄԻ ՊՏՈՅՏ

Ճանապարհորդական ակնարկներ

(Ա. Աթանասեանի)

III

Կուրի հովտումն էինք։

Լեռները գնալով մերկացան. ոչ անտառ, ոչ ծառ, ոչ նոյն իսկ թուփ. սրանից յետոյ տիրապետողը աշխատանքն էր, երկրագործի չարքաշ աշխատանքը։

Հովիտ, լեռ, բլուր, բոլորը բռնված են արտերով, ուր եգիպտացորենը փոխանակւում է հերթով ցորենի, գարու հետ։ Արտերը փարթամ, հասկերը խոշոր, ձիգ և խիտ։ Իւրաքանչիւր մի կտոր, ուր կարող է մաճ դալ եզը, ուր տեղ կայ գութանին շարժուելու՝ վարված, ցանուած է. ըստ երեւոյթին լաւ բերք է սպասւում, եթէ անընդհատ, գրեթէ ամեն օր, տեղացող անձրեւները չը փչացնեն մի տարվայ ողջ աշխատանքը, գալոց տարվայ յոյս-ապաւէնը, որը տեղ-տեղ արդէն փռանդված է՝ ցորենի մի մասը անձրեւից և քամուց խճճվել, պառկել են. ճիշտ է, այդպիսիների թիւը մեծ չէ, բայց մինչեւ քաղը դեռ եւս 15—20 օր կայ, իսկ անձրեւների վերջը չէ երեւում։

Հետաքրքիրը և աչքի ընկնողը այս շրջանում այն է, որ գիւղերին մօտ գտնված հողամասերի մի մասը պարարտացնում են. հէնց մեր աչքի առաջ անցան մի քանի սայլեր՝ լի աղբով. կոյտ-կոյտ թափում էին այստեղ և այնտեղ. շուտով ցրելու են արտով մէկ և ապա՝ վարելու են հողը, տալով նրան նոր ույժ, նոր նիւթ և սնունդ։ Արտերի պարարտացնելու հետեւանքը աչքառու է. գիւղի մօտ գտնված, հետեւապէս և պարարտացրած արտերի թէ տեսքը, թէ հասակն ու հասկերի փարթամութիւնը իսկոյն աչքի են ընկնում։

Կանգնեցրի մեր առաջ տանող մահմեդական գիւղացուն։

—Վաղուց է սկսել էք հողը պարարտացնել։

—Ասան, երեսուն տարի կը լինի, պատասխանեց, կանգնեցնելով սայլը։

—Հետեւանքից գոհ էք։

—Ի հարկէ. բայց ինչ արած որ շատ աղբ չունենք. անասուններս քիչ է. արօտներ և խոտ չունենք. եթէ շատ անասուններ պահել կարողանայինք, մեր արտերի կէսը կը պարարտացնէինք. հողը քիչ է, ասաց նա, աչքերը գցելով սարերին ու բլուրներին։

—Կարծէք եւ ասել թէ նոյն հողից որքան էք ստանում եթէ պարարտացրել էք և որքան այն արտից, որ առանց պարարտացման է մնացել։

Գիւղացին մտածեց, հաշւում էր, համեմատում։

—Մէկ ու կէս անգամ աւելի. օրինակ, ես անցեալ տարի ցանել էի երկու կտոր, մէկը ահա այնտեղ՝ գիւղի տակին, միւսը՝ այն սարի ետեւում. գիւղի տակի հողից, որը մի կերպ աղբել էի, ստացայ ձեր հաշւով 100—120 պուդ ցորեն, իսկ սարի ետեւի հողից, որը մի փոքր մեծ էր առաջինից, 70—80 պուդ։ Առաջինի ցորենի պուդը ծախեցի 85 կոպ., երկրորդի պուդը 60-ով էլ չառան. սեւուկ կար, գիժ ցորեն կար, մանր էր. դարման էլ դուրս չեկաւ... Լաւ բան է աղբը—հող, միայն հող չունենք... Ապա փոքր ինչ մտածեց, զննեց ինձ ոտից մինչեւ գլուխ և ժպտալով դարձաւ ինձ.

—Խաղէին, ճիշտ է որ մեզ հողեր են տալու։—Ո՞վ պէտք է տայ։

—Էրթօրան. ասում են, Պետերբուրգում այժմ էրթօրա է, այնտեղ արդէն սկսել են հողեր բաժանել։

Ուղեկիցս, լեհացին, ծիծաղեց։

—Էրթօրան փակվեց, այո, հեռագիր կայ։

Թուրք գիւղացին չը հասկացաւ։ Երբ նրան բացատրեցինք Դումայի փակումը, նա գլուխը տարուբերեց։

—Չէ, խաղէին, էրթօրան չի փակվի. այսօր փակվեց, վաղը կը բացվի. քաղցից հօ մեռնելու չենք. առանց էրթօրայի այլեւս անկարելի է ապրել։

Կառապանը շտապեցնում էր. ժամանակ չէր կար շարունակելու այս հետաքրքիր խօսակցութիւնը։

Ես միայն շտապեցի մխիթարել խօսակցիս։

—Ճիշտ է, էրթօրան չի մեռնի, վաղ թէ շուտ հող կը ստանաք։

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը։

Մեր ընկեր լեհացին, որ 35 տարի ապրում էր այս երկրում և 35 տարի անտառապահի պաշտօն ունէր և լաւ ծանօթ էր ժողովրդին, պատմեց մեզ «էրթօրայի» մասին, այն «էրթօրայի», որը այնպէս խոր նստել էր թուրք գիւղացու մտքի, հոգու մէջ։

—Երեք-չորս տարի է, պատմեց խօսակիցս, ինչ վրացի երիտասարդութիւնը ընկած ժողովրդի մէջ սկսել է քարոզել դրանց իրանց վիճակի անմխիթար լինելու և դրա առաջն առնելու միջոցների մասին։ Եկեղեցի, ուսումնարան, գիւղական ժողով այդ ամենն էլ ծառայել են պրոպագանդիստների համար որպէս ամբիոն, ուր ժողովւում էր գիւղացիների ահագին բազմութիւն. կին, երեխայ, ծեր օր ու գիշեր էին անցնում այս ժողովների մէջ, և ամեն անգամ ժողովները վերջանում էին այս կամ այն բանաձեւով, որը գրեթէ միշտ յանգում էր նրանով՝ որ պէտք է հողը տալ աշխատաւորին, խլել կալուածքները ազնուականներից, բացել համայնական բանկեր, ունենալ զինանոցներ, հարկը բաժանել ըստ եկամուտի, հիմնել համայնական արհեստանոցներ և գործարաններ, վերացնել զինուորութիւնը, հաւասարեցնել բոլորին, մի խօսքով հաստատել ողջ երկրում «էրթօրա», «միութիւն-հաւասարութիւն». ժողովուրդը ոգեւորութեամբ լսում էր այդ քարոզները, որից յետոյ ժողովրդին բաժանւում էին հարիւրաւոր մանր գրքոյկներ և ժողովի ռէզոլիւցիան։ Պրոպագանդիստներ դուրս եկան հէնց գիւղերում, իրանց գիւղացիների միջից. սրանք բաւականանում չէին այդ քարոզով վրացական գիւղերում, այլ մտնում էին և աջարական գիւղեր, և՛ թրքական, և՛ հայկական, և որովհետեւ այստեղի գիւղացիները խօսում են վրացերէն, ուստի և ամեն տեղ դրանք մեծ աջողութիւն ունեին։

—Հալածվո՞ւմ էին «էրթօրիստները», հարցրեցի ես։

—Շատ, մանաւանդ այս վերջին հինգ-վեց ամիսներում. հարիւրաւորների կալանաւորեցին, երկրից դուրս քշեցին, նոյն իսկ Ռուսաստան աքսորեցին, բայց եթէ բռնվում էր մէկը, նրա տեղ դուրս էին գալիս հինգը, տասը։ «Էրթօրան» դարձել էր ժողովրդի համար մի կրօն և այդ կրօնի համար նա ամեն տեսակ հալածանք տանում էր, որպէս մի անհրաժեշտութիւն։ Քրիստոնէութիւնն էլ այդպէս տարածվեց, ասում էր ժողովուրդը, և... բանտ կամ աքսոր գնում։

Լեհացիս, չընայելով իր 60 տարեկան հասակին, պատմելիս ոգեւորվում էր։

—Մեր երկրին էլ այդպէս էր, և ասում են այժմ էլ այդպէս է. ես ինքս սրանից 40 տարի առաջ «էրթօրիստ» էի, յետոյ ծանր օրեր եկան, փախայ Կովկաս և... այստեղ էլ մնացի. այժմ նորից յարութիւն է ստացել էրթօրան և այն էլ ամեն տեղ։

—Հայերի մէջ ինչպէ՞ս. էրթօրան տարածվա՞ծ է, հետաքրքրվեցի ես։

—Չը գիտեմ. հայ գիւղերում չեմ եղել, բայց ինչ որ չէ լսվում. միայն գիտեմ, որ ժողովրդի մէջ հայ գիւղերում շատ զէնք է մտնում. ես ինքս մի հին հրացան ունէի, 80 րուբլիով գնեց մի հայ. հարցրեցի՝ ինչ կայ. ասաց՝ թուրքերից վախենում ենք, պատրաստութիւն ենք տեսնում։ Բայց ղուր. այստեղի թուրքերը լաւ, աշխատասէր և հանգիստ ժողովուրդ են. նրանց մեծ մասը էրթօրիստներ են, շնորհիւ վրացի և աջարացի պրոպագանդիստների. սրանք աշխատող ժողովրդի հետ չեն կռւի..

Մութը ընկնում էր. հեռուից երեւացին ծառեր և մի բարձրութիւն լեռան լանջին։

—Ախալցխան է, ասաց ուղեկիցս, ցոյց տալով ծառաստանը։

Մի կէս ժամից Ախալցխան վառվեց. երեւացին լապտերների հազիւ նկատելի լոյսը, լուսաւորված պատուհանները։ Մենք մտանք հին քաղաք և, անցնելով մի երկար շարք խանութների առաջից, ուր հերթով վայր էին գալիս իմ ճանապարհորդակիցները, կանգ առանք քաղաքի «ամենալաւ հիւրանոցի» «Лондонские номера»-ի առաջ։

(Կը շարունակվի)

ՅՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Երէկ, օգոստոսի 10-ին, առաւօտեան ժամի 10-ին նշանակուած էր առաջնորդարանում 12 պատուիրակների նիստը, որոնք պէտք է ընտրէին 4 հոգաբարձուներ Յովնանեան-Մարիամեան օրիորդական դպրոցի համար։

Բանալով նիստը, առաջնորդը կարդաց Վեհ. Կաթողիկոսի կօնդակը ընտրութեան մասին, որի մէջ ասված է, թէ ընտրութիւնը պէտք է կատարել Յովնանեանի կտակի ճիշտ մտքի հիման վրա։ Առաջնորդը յայտնեց նաեւ, որ կտակի մէջ ասված է, թէ հոգաբարձուներ պէտք է ընտրել Թիֆլիսի բնակիչներից։ Պատուիրակներից ոմանք—Հ. Առաքելեան, Տ. Յովհաննիսեան, Ալիքեգեան ցանկութիւն յայտնեցին կարդալ կտակը, ծանօթանալու համար նրա բովանդակութեան հետ, որպէս զի կարելի լինի վարուել կտակի ճիշտ մտքի համաձայն։ Ա. Արասխանեան համառօտակի բացատրեց թէ ինչպէս ծագեց նոր հոգաբարձութիւն ընտրելու հարցը։ Ժողովը որոշեց յետաձգել նիստը մինչեւ երեկոյեան ժամը 5-ը, խնդրելով առաջնորդից բերել տալ կտակը կարդալու համար։

Երեկոյեան ժամը 5-ին պատուիրակները նորից գումարվեցին։

Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին հոգաբարձուներ՝ տ. Դարիա Թաղէոսեան 10 ձայն, Տ. Յովհաննիսեան, Լ. Նազարեան, Յ. Թափրեան 9-ական ձայներով՝ և անձնափոխանորդներ՝ Մ. Յովհաննիսեան, Մ. Մուշեղեան, Ս. Շխեան և Ս. Էյրամեան։

ԷՋՄ. ԿԵՆՏՐ. ԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՋԸ

Առեն վ. Պլտեեան տպագրել է հետեւեալ ծրագիրը.

«Որովհետեւ կարող է պատահել, որ իբր վարդապետ՝ էջմիածնի Կենտրոնական ժողովի պատգամաւոր ընտրուելու թեկնածութիւններ առաջ բերէ, ուստի և պարտք եմ համարում նախօրօք դնել համառօտ կերպով այն հարցերի շարքը, որոնց պաշտպանելու և իրագործելու՝ համոզված կողմնակից եմ։

1) Վանքական և եկեղեցական հողեր.—Այդ հողերից այն մասը, որի վրա այժմ հայ գիւղեր կան, տալ այդ գիւղացիներին առանց գնման՝ իբր մշտական սեփականութիւն։ Այն բաց հողերը, որոնք ցարդ չեն բնակեցրված, բնակեցնել հողազուրկ հայ գիւղացիներով։ Նախքան թէ պետական ընդհանուր օրէնքներով կը լուծվէին վանքական անտառների և հանրային հաստատութիւնների վիճակը, դրանց համար կազմել մի տնտեսական վարչութիւն՝ զուտ աշխարհականներից, իսկ եկամուտները գործադրել ազգային կրթական հաստատութիւնների վրա։

Վանքական այն անշարժ կայքերը—տներ, խանութներ, և այլն, որոնք գտնւում են քաղաքներում, ու չեն շինված թեմային եկամուտներով, նրանց կառավարութիւնը յանձնել յիշված վարչութեանը. թեմային եկամուտներով շինվածները լինելով թեմի սեփականութիւնը, պիտի մնան տեղական կրթական կարիքները հոգալու և տեղական ինքնավար մարմինների վարչութեան տակ։ Այսպէս օրինակ, Քիշնեւի կալուածները մնալու են Բեսարաբիայի թեմին, Ալէքսանդրօպօլի խանութների շարքը Ալէքսանդրօպօլի վիճակի դպրոցներին և այլն։

2) Դպրոցական խնդիրներ.—Ի նկատի ունենալով որ ընդհանուր և տարրական կրթութիւնը պետութեան պարտքն է, ու պիտի ի հաշիւ պետական եկամուտների լինի, մեր ազգային եկամուտների գործադրութիւնը առայժմ պիտի կենտրոնացնենք միջնակարգ և մասնագիտական կրթական հաստատութիւնների վրա՝ տեղական կարիքների համաձայն։ Կրթական գործը միանգամայն ազատ պիտի լինի հոգեւոր - կղերական ազդեցութիւններից և միջամտութիւնից։

3) Ճեմարան.—Ճեմարանը վերածել հայկական բարձրագոյն դպրոցի. փակել ցածր դասարաններն աստիճանաբար։ Աստուածաբանութիւնը, եթէ միայն նա առանձին պիտի լինի, կենտրոնացնել մի լսարանում. իսկ նրա ուսուցումը կամաւոր անել։

4) Թեմային եկամուտներ.—Այդ եկամուտների ձեւերն ու կարգադրողը ժողովուրդն պիտի լինելու, ուստի և նրանց սահմանողը և գործադրողը պիտի լինեն տեղական ինքնավար մանր միութիւնները. վերջ պէտք է դնել հոգեւոր իշխանութեան ներկայիս այդ եկամուտների սեփականաբար գործը գանձելու տեղը և իր տեսակ ձեռքերին։

5) Ընտրական սկզբունք.—Մեր բոլոր գործերի մէջ՝ վարչութիւնների, հոգաբարձութիւնների և այլ տեղական և ընդհանուր ժողովների ընտրութիւնների քառանդամ ֆօրմուլայի ճիշդ գործադրութիւն։

Վարչական պաշտօնների մէջ կուսակրօնութեան տեղը պիտի բռնէ ամուսնաւոր հոգեւորականութիւնը — կուսակրօնութիւնը պիտի կենտրոնանայ վանքերի մէջ։

6) Ամուսնական խնդիրներ.—Նախքան թէ պետական ընդհանուր օրէնքներով քաղաքացիական պսակը պարտադիր կը լինի, գործադրել Շահապիվանի ժողովի կանոնները, թոյլ տալ և ամուսնութիւն արիւնակցական չորրորդ խնամիական երկրորդ (առանց քինոնի) աստիճաններում։ Ամուսնալուծութիւնն անել ժողովրդով սահմանուած կանոնների համաձայն, հարկադրել և հասկացնել հոգեւոր իշխանութեանը, որ նա պարտաւոր է գործել այդ կանոնների մտքի և ոգու համաձայն։

7) Եկեղեցին պետութիւնից բաժանելը լինելով մի անհրաժեշտութիւն, մեր գործունէութիւնը ուղղված պիտի լինի դէպի այդ. ուստի և այն բոլոր հասարակական-դպրոցական խնդիրները, որ այժմ ենթադրվում են եկեղեցու հետ կապված, պիտի անխուսափելի կերպով անցնեն ժողովրդի, այդ գործերի իսկական տիրոջ՝ ձեռքը։»

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

V

Ոչ-սրբազնագործ պաշտօնեաներ

Եկեղեցական համայնքն ունի շատ տեսակ կարիքներ, որոնց հոգալ կարող են և ոչ-սրբազնագործ կամ սովական պաշտօնեաներ։ Եկեղեցական աշխարհի մէջ կան կրթական—դպրոցական հաստատութիւններ, ուր կարող են տեսուչ, ուսուցիչ, հոգաբարձու լինել ոչ-սրբազնագործ, կամ օծումն, ձեռնադրութիւն չունեցող պաշտօնեաներ, անձեր։ Կան վարչական, դատաստանական, բարեգործական հիմնարկութիւններ, ուր կարող են պաշտօն ունենալ սովական մարդիկ։ Կան այլ և այլ խորհուրդներ — հոգաբարձական, թեմական կենտրոնական և ազգային, որոնք կարող են բաղկացած լինել ոչ-ձեռնադրված անձերից։

Չը նայած, որ բոլոր վերը յիշատակված հաստատութիւնների մէջ կարող են պաշտօն վարել չը ձեռնադրված, հոգևոր օծումն չը ստացած մարդիկ, բայց և այնպէս բոլոր այդ պաշտօնեաները, իբրև գործիչներ եկեղեցական ասպարէզում, եկեղեցական հողի վրա, հոգևորականներ են։

Հայ եկեղեցու անդամը միայն իրաւունք ունի հայ եկեղեցական-ծխական, թեմական, կենտրոնական և ազգային ժողովների համար անդամներ ընտրելու և ընտրվելու։

Հայ եկեղեցու անդամը միայն իրաւունք ունի վճռական ձայնով միջամտութիւն գործելու իր եկեղեցական ամենատեսակ խնդիրների լուծման ու հաստատութիւնների բարեկարգութեան հարցերի մէջ։ Իսկ հայ եկեղեցու անդամ լինելու անհրաժեշտ պայմանն այն է, որ նա լինի մկրտված հայ եկեղեցու աւազանի մէջ, որ լինի դրոշմված—օծված հայ միւռոնով և հայ արարողութեամբ և որ վերջապէս նա հոգով պատկանէ հայ ազգի կրօնական դաւանութեանը։ Ուրեմն մեր եկեղեցական ժողովներին մասնակցելու, անդամակցելու պայմանը հոգևորական է. հետևապէս մեր բոլոր ընտրող և ընտրվողները իբրև հոգևորականներ, իբրև եկեղեցու անդամներ են, որ հանդէս են գալիս գործելու, այլ ոչ իբրև պարզ հայ մարդիկ, իբրև քաղաքացիներ, իբրև այս կամ այն քաղաքական դաւանանքի հետևողներ ու պատկանողներ։ Այսպիսիների ընտրելու և ընտրվելու, այսպիսիների գործունէութեան ասպարէզը ուրիշ տեղ որոնելու է։

Մեր եկեղեցական աշխարհի մէջ պաշտօնավարող այս սովական սպասաւորները ևս ենթակայ են նոյն եկեղեցու ժողովներով սահմանված կարգ ու կանոններին։ Նրանք ևս պաշտօնի են հրաւիրվում ընտրութեամբ։ Նրանք ևս պատասխանատու են իրանց ընտրողների ու պաշտօնի հրաւիրողների առաջ։ Նրանք ևս պարտաւոր են ընթանալու ժողովրդի հաւաքաբար արտայայտված կամեցողութեան համեմատ։

Նրանք, որոնք կրօնը, դաւանանքը տարամերժում են, որոնք նպատակ ու ծրագիր ունեն եկեղեցին չէզոքացնելու, նրանք իրաւունք էլ չունեն մասնակցելու եկեղեցու ժողովներին։ Այլապէս դաւաճանութիւն է մտնել եկեղեցի իբրև եկեղեցական, ընտրել և ընտրվել իբրև եկեղեցու անդամ և գնալ եկեղեցին տապալելու, գնալ եկեղեցին ժողովրդից բաժանելու։ Իւրաքանչիւր մի հայ-լուսաւորչական, որ մտնում է եկեղեցի, որ մասնակցում է եկեղեցական այլ և այլ ժողովներին, ենթադրվում է, որ նա շիտակ, ազնիւ, համակրող, հետևող ու հաւատարիմ անձն է նոյն եկեղեցու հոգուն և կը լինի նոյնպիսի գործիչ եկեղեցական աշխարհում։

Ահա այս տեսակէտից է, որ ժողովրդական եկեղեցին չէ որոնում իր գործիչի մէջ հոգևորական աստիճան-ձեռնադրութիւն, եթէ նա սրբազնագործելու պաշտօն չունի, այլ միայն շիտակ-հարազատ դաւանանք այն ամենի, ինչ որ իր՝ ժողովրդական եկեղեցու հաւատի հանգանակն է կազմում։ Ահա այս տեսակէտից է, որ մեր եկեղեցին դասակարգային խտրութիւն չէ ճանաչում, որ եկեղեցական ժողովների մէջ անպայման հոգևորականներից կազմված լինելու կամ աշխարհականներ չը լինելու պայմաններ չէ ընդունում։ Ահա այս տեսակէտից է, որ հոգևոր աստիճան ունեցող պաշտօնեաները կարող են դրվել աստիճաններ չունեցող սովական պաշտօնեաների իշխանութեան ներքոյ։

Երջանկայիշատակ Ներսէս Ե. կաթողիկոսը (Աշտարակցի) մի շարք աշխարհականների գործակալներ էր կարգել։ Այս աշխարհական գործակալները իրաւունք ունէին եկեղեցիների ու քահանաների վրա վերահսկողութիւն գործելու։ Քահանաները զանգահարութեամբ ու շուրջառներ հագած էին դիմաւորում նրանց։ Ենթադրել թէ Ներսէս Աշտարակցին մեր եկեղեցու հոգին չէր ճանաչում կամ անկրօն, անհաւատ կաթողիկոս էր—կարծեմ ոչ մէկի մտքից չի անցնի։

Ժողովրդի միջից ընտրված երեսփոխանները ամէն ժամանակ և ամէն տեղ, ընդհանուր առմամբ, մի տեսակ վերահսկողութեան իրաւունք են ունեցել իրանց եկեղեցու հոգևոր պաշտօնեաների գործողութեան նկատմամբ։

Աշխարհական թեմական տեսուչներ ենք ունեցել, կարգված կաթողիկոսների կողմից, որոնք (տեսուչները) ղեկավարել են մեր եկեղեցական դպրոցները։ Եւ այս դպրոցների մէջ պաշտօն վարող քահանաները, հոգաբարձութեան նախագահները, ինչպէս և յաջորդ վարդապետներն ու գործակալ քահանաները ստորադրվել են թեմական տեսչի ցուցումներին։

Մենք ունեցել ենք կ. Պոլսում աշխարհական անձն իբրև պատրիարքական փոխանորդ։ Դեռ երէկ, մէկէլ օրը մեր լրագիրների մէջ Թաւրիզում աշխարհական մարդու անունն էին տալիս իբրև Ատրպատականի առաջնորդութեան թեկնածու։

Վերը յիշատակած մեր օրինակները պարզապէս ասում են, որ հոգևոր աստիճան-ձեռնադրութիւն պահանջվում է միայն ու միայն սրբազնագործութիւններ կատարելու համար, այնուհետև մնացած պաշտօններից՝ գործակալութիւնը, կրօնուսուցչութիւնը, հոգևոր կառավարութեան, կոնսիստորիայի ու սինօդի անդամութիւնը, թեմական կամ շրջանային տեսչութիւնը կարելի է համարել սովական պաշտօններ և կարելի է ու ցանկալի է տալ ոչ-սրբազնագործ, բայց արժանաւոր ու բանիբուն պաշտօնեաների—աշխարհականների։

Շեշտում եմ, մեր եկեղեցու հոգին արգելք չէ դնում այդ պաշտօնները աշխարհականներին յանձնելու համար՝ այն պարզ, հասկանալի և հիմնական պատճառով, որ եկեղեցու անդամ, եկեղեցու հարազատ զաւակ չէ ճանաչում նրան, ով մերժում է իր ազգային եկեղեցին, ով չէ ընդունում ու խոստովանում իր ազգային եկեղեցու դաւանանքը։ Հետևապէս այսպիսիները, եթէ կան, իբրև շիտակ համոզմունքի մարդիկ, ոչ իրանք ներս կը մտնեն եկեղեցական ասպարէզում պաշտօն վարելու և ոչ եկեղեցին—ժողովուրդը կամ սրա կողմից ընտրված խորհուրդը պաշտօն կը տայ նրանց։

Իսկ եթէ այսօրվայ գործնական կեանքը չէ արդարացնում մեր եկեղեցու հայեացքը, այս տեսակէտը դա՛ նախ դեռ կարօտ է ստուգութեան և երկրորդ եթէ այդ իրականութիւնն էլ լինի իբրև զարտուղութիւն—արժանի է առանձին քննադատութեան, առանձին հոգացողութեան։

Մեր եկեղեցու սովական այն պաշտօնեաները, որոնք պարտաւորութիւն ունեն ամբողջովին յանձնվելու իրանց ստանձնած պաշտօնին, ինչպէս՝ ուսուցիչները, դպրոցական թէ շրջանային տեսուչները, տիրացուները, դպիր ու քարտուղարները և այլն պէտք է ստանան որոշ ռոճիկ այնչափ, որչափ պէտք է մարդավայել կերպով ապրելու համար, և պէտք է նրանց պաշտօնի մէջ մտնելու, մնալու և արձակվելու պայմանները դրված լինեն կամայականութիւններից իսպառ զերծ հիմունքների վրա, այլ և պէտք է նրանց վիճակը ապահոված լինի, որ մարդիկ կարողանան իրանց ընտրած պաշտօնին նուիրվել և արդիւնաւորել։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

Բաթում

ԳԱՂԹԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Վերջին տարին մեր երկրից բազմաթիւ հայ արհեստաւորներ, գլխաւորապէս պարսկահպատակներ, գաղթում են Ամերիկա։ Այդ առիթով կարևոր ենք համարում արտատպել «Ձայն Հայրենեաց» թերթի հետևեալ յօդուածը.

Միացեալ Նահանգաց ժողովուրդը յուզող ներքին խնդիրներու շարքին մէջ Հայոցս համար ամենէն հետաքրքրականը գաղթային հարցն է։ Հայ գաղութը Ամերիկայի մէջ բաղդատմամբ ուրիշ գաղութներու նոր պատմութիւն մը ունի։ Առաջին Հայը որ 1848-ին Ամերիկեան հողին վրայ կոխած էր՝ հանգուցեալ Սարգիս Մինասեան էր, որ Ամերիկայէ ապրանք կարառէր ի Թուրքիա՝ Ղալաթիոյ ծանօթ վաճառատան մէջ ծախելու համար։

1848-է մինչև 1875 Հայոց այս երկիր գալուն գլխաւոր նպատակն էր կրթական. 1865-է մինչև 1896՝ վաճառականական։ 1897-է ասդին է որ Հայութիւնը հոս բնորոշապէս գաղութ մը կազմած է։ Առաջին շրջանին մէջ Հայ երիտասարդներ հոս եկան՝ աստուածաբանութիւն կամ բժշկութիւն ուսանելու, որպէսզի վերադարձին գործեն Մայր Հայրենեաց բարոյական և ֆիզիքական վերածնութեան համար։ Երկրորդ շրջանին մէջ Հայ հոսանքին տիրող շարժառիթը առևտրական էր։ Ամերիկայի և Թուրքիոյ միջև առևտրական փոխադարձութեան բերմամբ վաճառականութիւնը գիրգացած էր։ Պօլսոյ և Իզմիրի Հայ վաճառականք սկսան տուներ բանալ Նիւ Եօրքի, Բոստոնի և այլ քաղաքաց մէջ։ Հայ վաճառականութիւնը արևելեան գորգի մեծ շահաստան մը գտած էր Ամերիկայի մէջ։ Մենք ապրանք ունէինք ծախելու, որ ճշդիւ կը յարմարէր Ամերիկեան փափկասուն տիկնանց ճաշակին։ Գորգի վաճառականութիւնը Ամերիկայի Հայ առևտուրին կենսագործ ոյժն եղաւ։

Սակայն բուն Հայ գաղթականութիւնը կը սկսի 1896 ին, կամ թերևս 1894-ին։ Երկրորդ թուականին յիշէ ունեցաւ Սասնոյ առաջին ջարդը, և առաջին թուականին՝ Փոքր Ասիոյ ընդհանուր ջարդը։ 1896-ին Թուրքիոյ Հայ ժողովուրդը սպանդանոցի մէջ յօշոտուող ոչխարներու վիճակը ունեցաւ։ Հոն մնացող երիտասարդութեան մեծ մասը սրոյ տակ ընկաւ, իսկ անոնք որ կրնային Ամերիկա փախան։ Ժողովուրդը գժուխէ կը փախչէր։ Այս շրջանին մէջ Հայը հոս կուգար ոչ թէ արուեստ սորվելու կամ դրամ շահելու, այլ կենաց շունչ առնելու։ Հայութեան միայն մէկ դասակարգը չէր որ հոս կուգար, այլ բոլոր դասակարգերը—հարուստը թէ աղքատը, գիտունը թէ տգէտը, պարկեշտը թէ վաւաշոտը։ Անշուշտ գաղթականութեան այս անզանազան հոսանքը մեծապէս ազդեց Ամերիկայի Հայ գաղութին նկարագրին։ Հայութիւնը այս երկրին մէջ կը ներկայանար ոչ միայն իր գիտուններով և վաճառականներով որպէս առաջ, այլ իր բովանդակութեամբ, այսինքն իր բարի և թէ չար կողմերով։ Զոր օրինակ, Ա. և Բ. շրջաններուն մէջ հազուադէպ էր կրնալ մը ոճրագործ Հայ մը գտնել գաղթականութեանս մէջ, մինչդեռ Գ. շրջանին մէջ ամենօրեայ թերթերու մէջ կարդալ բասկանք Հայ մարդասպաններու, կնաթողներու, բանտարկեալներու և գինեմոլներու անունները։ Բանին բնութենէն այդպէս եղաւ։ Կարգ մը մարդիկ եկան, որք քաղաքակիրթ կենաց վրայ բնաւ գաղափար չունէին։ Ազատ քաղաքակրթութեան շողշողուն արևը խախտեց իրենց բարոյական աչքերը և երբեմն կուրացուց։ Հայրենիքի ընտանեկան և եկեղեցական աւանդութիւններէն հեռի ըլլալով, կարգ մը մարդիկ անզուսպ գործունէութիւն ցոյց տուին իրենց կիրքերուն յագուրդ տալու մասին։

Այս շրջանին մէջ հայ գաղթականութեան ապրուստի միջոց եղան գործարանք։ Նորեկներուն աննշագին մեծամասնութիւնն ոչ երկրին լեզուն գիտէր և ոչ իսկ դրամ ունէր անկախ գործի ձեռնարկելու։ Սակայն, ուրախալի է որ, անոնցմէ ոմանք քիչ ատենի մէջ անգլիերէն լեզուն սորվեցան և բաւական դրամ խնայեցին անկախ դիրքեր գրաւելու։ Գործարանը, թէև ապառողջ վայրեր, մեր ժողովրդեան փրկութեան ապաստարաններ եղան այդ ճգնաժամին մէջ։ Գործարանի կեանքը՝ մեր ժողովուրդը յարաբերութեան մէջ դրաւ այլազգիներու հետ, որք նախանձայլիր աչօք նայեցան նորեկ մրցակիցներուն վրայ։ Այս կեանք բոլորովին նոր փորձառութիւն մ'էր՝ արտերու վրայ մաքուր օդ շնչել վարժուած երկրագործ ժողովրդեան համար։ Ոմանք հիւանդանալով մեռան, իսկ մեծամասնութիւնը բնիկ առողջութեամբ յաղթեց նախնական դժուարութեանց։

Այս է Ամերիկայի մէջ հայ գաղթականութեան համառօտ պատմութիւնը։ Սակայն նախնական դժուարութեանց յաղթելով միայն չենք կրնար մեր դիրքը հաստատել այս երկրին մէջ, ուր գաղթային խնդիրը պետական շրջանակները յուզող ամենէն հրատապ հարցն է։ Երկրագնդիս ամեն ազգութիւնները ներկայացնող գաղութներ կան հոս, և անոնք տնտեսական և քաղաքական դիւրահասկանալի պատճառներով իրարու յառաջդիմութեան առջև խոչնդոտներ հանելու պատրաստ են միշտ։ Աշխատաւորաց Ամերիկեան Դաշնակցութիւնը Ուաշինգթընի մէջ օրէնսդրական հզօր միջոցներ կը գործածէ՝ օտար երկիրներէ գործաւոր դասակարգին (Proletariat) հոս գաղթելուն դէմ, կամ անոնց հոս ընդունելուն պայմանները այնքան խստացուցած են որ նորեկներուն մէկ կարևոր մասը միշտ ետ դրկուած է։ Դաշնակցութիւնը կազմուած է Մր. Գոմպըրսի վարչութեան տակ գործաւորական միութիւններէ երկրին ամեն կողմ։ Այս միութիւնները կը հաւատան թէ ամեն նոր գործաւոր որ այս երկիր ոտք կը կոխէ՝ իրեն կարողութեան և ընդունակութեան չափով կը դժուարացնէ բնիկ ամերիկացիի դիրքը։ Միշտ այս պատճառաւ է որ հոգւով չափ կը հակառակին Չինական Ազգային գաղթի մը հաստատելուն այս երկրին մէջ։ Անոնց ճնշման տակ Կոնգրէսը քուէարկած է այնքան խիստ օրէնքներ որ ոևէ նոր չինացի մը ներս չի կրնար մտնել։ Արդէն հոս բնակող չինացիք մէկ կողմէն կը մեռնին, և ոմանք ետ իրենց երկիրը կերթան։ Եւ քանի որ քաղաքացիական ոևէ արտօնութիւն չունին և չեն կրնար բնաւ վայելել, Չինական գաղութը նշանակութենէ բոլորովին զուրկ է այս երկրին մէջ։ Զարմանալին սա է որ Աշխատաւորաց Ամերիկեան Դաշնակցութեան մէջ կան հազարաւորներ, որոց հայրերը և հետևաբար իրենք այսօր Ամերիկա պիտի չըլլային, եթէ այս երկիր կէս կամ քառորդ դար առաջ ունենար այսքան խիստ օրէնքներ՝ գործաւոր դասակարգին գալուն դէմ։ Այս մարդիկ մոռցած կը թուին իրենց և իրենց հայրերուն նախնական դժուարութիւնները, և հիմա ուրիշներուն առջև կը ջանան դիզել խոչնդոտներու անգին կոյտեր։ Անձնասիրութեան վատ յատկանիշն է այս։ Անոնք իշխանութեան վրայ եղող ոևէ կուսակցութեան վրայ կրնան ճնշում բանեցնել իրենց քուէներով, որ արդէն Ուաշինգթընի մէջ բիւրաւոր մը կը պահեն իրենց շահերուն արթուն աչքերով հսկելու։ Լոնդոնի Պարլամէնթին մէջ աշխատաւորաց յաջողութենէն քաջալերուած ըլլալով, Մր. Գոմպըրս և իր ընկերները կը ջանան Կոնգրէսին մէջ իրենց կողմանէ երեսփոխաններ ունենալու, ինչպէս տրօսթները արդէն ունին ծերակուտականներ և երեսփոխաններ։

Կոնգրէսին վերջին ներկայացուեցաւ գաղթային նոր օրինագիծ մը, որոյ մասին Ամերիկայի Հայ գաղութը կարժէ որ ամփոփ տեղեկութիւն մը ունենայ։ Ամերիկեան կառավարութիւնը սոսկումով կը դիտէ ահ հաստաբակ նորեկ գաղթականներու այն հակամիտութիւնը, որով անոնք կը խռնուին մեծ քաղաքներու մէջ, փոխանակ երթալու արևմտեան և հարաւային Նահանգները և աշխատելու ագարակներու մէջ, ուր գործաւորաց պակասութիւնը շատ զգալի է։ Կառավարական այս մտահոգութեան հիմերը ըմբռնելու համար Ամերիկայի քաղաքային կառավարութեանց նկարագրին վրայ յստակ գաղափար մը կազմելու է ընթերցողը։ Ըսուած է, և կը կարծուի թէ իրաւամբ, որ Ամերիկայի քաղաքաց տեղական վարչութիւնք խիստ ապականեալ են։ Ընկերաքաղաքական հեղինակութիւնք կըսեն թէ՝ Ամերիկեան հասարակապետութեանց հանճարին անծանօթ բազմաթիւ գաղթականներ մեծ քաղաքներու մէջ հաւաքուելով քանի մը տարուան միջոցին քաղաքացի կըլլան, իրենց քուէները ագահաբար գործածելով անխիղճ փոլիթիշըններու ձեռքերուն զոհ կըլլան։ Քաղաքական բօսերը միշտ պատրաստ են այսպիսի միամիտները որսալու։ Նիւ Եօրքի մէջ Թեմընի Օլըխը այսօրինակ տգէտ և ապականեալ տարրերուն Մէքքէն է, և ամեն քաղաք իր չափուն համեմատ իր Թեմընին ունի։ Հանրապետական երկրի մը մէջ, ուր տգէտ քաղաքացի մը ինչպէս նաև Նախագահը մէկ քուէ ունի, անկարելի է կառավարութիւնը մաքրագործել, բայց միայն բարձրացնելով ժողովուրդին կենաց բարոյական և իմացական մակարդակը։ Եթէ ամբողջ երկրին կառավարութիւնը այնչափ ապականեալ ըլլար որչափ եղած է զոր օրինակ Նիւ Եօրքի քաղաքային վարչութիւնը, Միացեալ Նահանգաց հանրապետութիւնը և անոր հետ բոլոր ազատական հաստատութիւնները տարի մը կանգուն չէին կրնար մնալ։ Ուստի յայտ իսկ է թէ կեդրոնական կառավարութիւնը ծանրակշիռ պատճառներ ունի միջոցներ հնարելու, որով նորեկ գաղթականներ չմնան մեծ քաղաքներու մէջ, այլ երթան հազուադիւտ երկրին այն մասերուն մէջ, ուր աւելի նպաստաւոր բարոյական պայմաններ պիտի ընդունին իրենց քաղաքացիութեան հրահանգութեան միջոցին։ Անշուշտ այս նպատակին հասնելու համար Ուաշինգթընի կառավարութիւնը Թըքական բանի միջոցներու չէր կրնար դիմել՝ արտաքսելով քաղաքին գաղթականները դէպի գաւառները։ Երկու միջոցներ ունի։ Մին է գաղթային խիստ օրէնքներ քուէարկել գաղթականներուն ներս մտնելը կառավարող. միւսն է հրապուրիչ գործեր հայթայթել երկրին դեռ ցանցառաբար հաստատուած մասերուն մէջ։ Կոնգրէսին ներկայացուած օրինագիծը այս միջոցներէն առաջինը կը հայթայթէ։ Անոր բովանդակութիւնը համառօտիւ պարզենք հոս։

Կոնգրէսին մէջ և անկէ դուրս կան մարդիկ որ կը պնդեն թէ Միացեալ-Նահանգները հիմա պէտք եղածէն չափ բնակիչներ ունին, և թէ երկրին դուռները գէթ ժամանակի մը համար պարտին փակուիլ նորանոր գաղթականութեանց դէմ, մինչև որ ներկայ օտար տարրերը Ամերիկեան բնիկ ժողովուրդին հետ նոյնանան դաստիարակութեամբ և քաղաքական փորձառութեամբ։ Ասոնք են արտաքսականք (Exclstonists)։ Սակայն գաղթային այս օրինակ օրէնք մը գործադրել անկարելի ըլլալով, առանց առաջարկութիւնը մերժուած է։ Կան նաև անոնք որ կը պնդեն թէ գաղթականութեան դուռները չփակելով հանդերձ, եկողներուն թիւը կարելի եղածին չափ նուազեցնելու է տուրք պահանջելով և այլն։ Ասոնք են սահմանափակողք (Restrictionists), որոնց դիրքը աւելի տրամաբանական ըլլալով հանդերձ տակաւին կնճռոտ խնդիրը չի լուծեր, քանզի տուրք և այլն պահանջելով կարելի չէ անբաղձալի օտարականները դուրս ձգել, և վասնզի կայ որ այդ մեթոդով շատ բաղձալի գաղթականներ դուրս մնան, և շատ մը անբաղձալիներ ներս մտնեն։ Երրորդ դասակարգ մը կայ, որ կըսէ թէ բոլոր նորեկ օտարականներ խտրաբար քննուին, և անոնցմէ յարմարագոյնները ներս առնուին։ Ասոնք են ընտրողականք (Selectionists)։ Յայտնի է թէ բաղձալիները ընտրել անբաղձալի օտարականները արտաքսել կը նշանակէ։ Կոնգրէսին անդամոց մեծամասնութիւնը այս երրորդ դասակարգէ ըլլալով, հաւանօրէն ընտրական գաղթային օրէնք մը պիտի քուէարկուի։

Հոս մեզ համար հետաքրքրական խնդիր մը կը բացուի։ Հայերը բաղձալի գաղթականութիւն մը կը կազմեն այս երկրին համար։ Մի քանի անդամներ Բոստոնի գաղթային պաշտօնատան հետ շփման եկած ըլլալով, փորձառութեամբ գիտեմ թէ նորեկ Հայ գաղթականներէն ոմանց առողջական և ֆիզիքական վիճակը այնքան անգոհացուցիչ էր որ անոնք ետ երկիր դրկուեցան։ Արդէն trochama կոչուած աչքի հիւանդութեան մասին մերազնեից ուշադրութիւնը հրաւիրած եմ ուրիշ առթիւ ազգային մամլոյն միջոցաւ։ Գաւառներէն եկող Հայոց կարևոր մէկ մասին աչքերը վարակուած են այդ ախտաւորութեամբ, որ պարզապէս կը ցուցնէ թէ Հայերը իրենց հայրենի յարկերուն տակ որքան վատառողջ միջավայրի մէջ կապրէին։ Առողջ ծնողը է ծնեալ մանուկ մը trochama չի կրնար ունենալ, բայց միայն ապրելով աղտոտ մթնոլորտի մէջ, որ կուսերու բորբոքում յառաջ կը բերէ և կը գոյացնէ աւազանման բշտիկներ անոնց ներքև։ Այս հիւանդութիւնը ունեցող Հայ մը բնականաբար անբաղձալի գաղթական մէ որ ետ պիտի դրկուի։ Ամերիկա գալ ուզող Հայ մը Մարսիլիա կամ Լիվրփուլ հասնելուն պէս մասնագէտ ակնաբուժի մը քննել տալու է իր աչքերը։ Եթէ աչքերը trochama ունին, հոն դարմանուելով աչքակնալուն մասին վկայագիրով մը հոս գալու է։ Եթէ աչքակնալուն աստիճանէն անցած է հիւանդութիւնը, լաւ է որ բնաւ ովկէանոսէն ասդին չանցնի, քանզի վստահ կրնայ ըլլալ թէ հոս գալուն պէս ետ պիտի դրկուի։

Բաց աստի, փափաքելի է որ Ամերիկա գալու համար ճամբայ ելնող Հայ մը երկար ճամբորդութեան միջոցին լեզուի մասին քիչ մը պատրաստութիւն տեսնէ։ Իր անունը և հասցէն գրել գիտնալն իսկ յաճախ մեծ օգնութիւն եղած է նորեկի մը, որ ամեն կարևոր օգնութեան պէտք ունի իր գաղթականութեան առաջին օրերուն մէջ։

Սակայն աւելի կարևոր խնդիրը սա է թէ Հայերս երկրին դուռներէն ներս մտնելէ վերջ ընկերական տեսակէտով որքան կարևոր տարր կը կազմենք, որ Ամերիկա զմեզ բաղձալի գաղթականներուն դասէն համարի։ Հայ գաղթականութեան առաջին սերունդին փրկութեան միակ միջոցը պիտի ըլլայ տնտեսական կամ դրամական անկախ դիրք գրաւել, առանց որոյ մենք դատապարտուած ենք այս քաղաքականապէս ազատ երկրին մէջ տնտեսապէս գերիներ մնալ։ Տնտեսական անկախութեան պայմաններէն մէկն է հողի կամ որևէ հաստատուն կալուածքի տէր ըլլալ։ Գերմանացիք, Իրլանդացիք և Հրէայք այդ միջոցաւ հասած են իրենց ներկայ ազդեցիկ ընկերական դիրքին Ամերիկայի մէջ։

Դարձեալ, մեր տնտեսական անկախութեան հական պայմաններէն մին է մեր զաւակներուն տալ այս երկրին պայմաններուն յարմար գործնական դաստիարակութիւն, որով անոնք կարենան որևէ ասպարէզի վրայ օգտակար և արտադրիչ գործ մը գտնել։ Հայ ծնողը պարտին հասկնալ թէ այժմ բոլորովին տարբեր միջավայրի մէջ կապրինք, ու առևտրական ասպարէզը և մեքենական արուեստները կատարելութեան հասած են։ Մեր մասնաւոր պարագայից բերմամբ մենք ցարդ փաստաբաններու և վարժապետներու ազգ մը եղած ենք։ Սակայն ժամանակը հասած է որ, արևելեան, էֆէնդիական գաղափարները ծովը նետելով դրական խնդիրներով զբաղինք։ Իր գոյութեան համար մաքառող ժողովուրդ մը յաջողութեան կարճագոյն գիծը կընտրէ իր նպատակին հասնելու համար։ Այսպէս կրնան մեզմէ շատ աւելի զարգացեալ գաղթականութիւններ։ Հետևաբար, ինչ որ անոնց համար օգտակար եղած է մեզ համար ևս կրնայ ըլլալ։

(Դր.) Հ. Ս. Ճէլալեան

Բոստոն

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Գանձակ, օգոստոսի 9 ին

Թուրք-հայկական կռուից յետոյ հայերը իրանց մասնաւոր ունեցած մի այգի, «Կիսլովօդսկ» անունով, որը տօն օրերը ծառայում է իբրև զբօսատեղի։ Այգին գտնվելով հայոց թաղի կենտրոնում, պ. Մեհրում Ժամհարեանը այդտեղ շինել է մի փայտածածկ թատրոն. առայժմս ծածկված են միայն բեմը և երկու կողքի սենեակների կտուրները, իսկ հանդիսականները նստում են բացօդեայ նստարանների վրա։

Ամսիս 5-ին, շաբաթ երեկոյեան, պէտք է խաղացվէին տեղական սիրողների մասնակցութեամբ՝ յօգուտ թատրոնի շինութեան՝ «Մարմաղ ճրագինը» և «Մէջլիսի թուզը»։ Ինչպէս նշանակված, նոյնպէս և յաջորդ օրերը, մինչև երեքշաբթի երեկոյեան, անձրևի պատճառով ներկայացումը չը կայացաւ։

Երեքշաբթի երեկոյեան թատրոնը լիքն էր երկու սեռի բազմութեամբ։ Գալով ներկայացմանը, չը նայած մի քանի անհաջող պայմաններին, կարելի է ասել անցաւ աջողութեամբ, և բոլոր դերակատարները իրանց դերերը լաւ գիտէին և հասարակութեան կողմից արժանացան ծափահարութիւնների։

Մի բան, որ ներկայացման ժամանակ շատ անախորժ տպաւորութիւն էր թողնում, այդ այն էր, որ մեր հասարակութիւնը, այն էլ փոքր ի շատէ աշխարհ տեսած տիկնայք, քրքջում էր այն ժամանակ, երբ պէտք էր արտասուել... Մի պակասութիւն, որ աչքի է ընկնում գրեթէ ամէն մի քաղաքում...

Սագան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 5-ին

Երէկ Երևանը մի արտաքոյ կարգի շարժողութեան մէջ էր։ Ուրախ էր Թուրքը, ուրախ էր և հայը. բոլորի երեսին ժպտում էր գոհունակութիւնը։ Պատճառը Պարսից Շահի շնորհած Սահմանադրութիւնն էր, որ մօտ օրերս շնորհել էր իր հպատակներին առանց կրօնի խտրութեան։ Առաւօտեան ժամը 11 ն էր, երբ փոխ-նահանգապետը, քաղաքագլուխը ուպրավայի անդամների հետ, խաղաղարար կոմիսիայի անդամներից մի քանիսը և շատ մասնաւոր մարդիկ գնացին հիւպատոսարան շնորհաւորելու հիւպատոսին Շահն-Շահից շնորհված «Ժողովրդական տան համար»։ Հիւպատոսը խնդրում է իր այցելուներին երեկոյեան լինել իր մօտ մի փոքր ժամանակ անցկացնելու համար։ Ժամը 6-ն էր, երբ տեղական զուռնան առած հայերը, թւով մօտ 200 հոգի, գնում են դէպի Թուրքական մասը՝ հիւպատոսարան։ Թէ պարսկահպատակ և թէ տեղական Թուրքերը, որոնք արդէն տեղ էին բռնել հիւպատոսարանում, դուրս են գալիս իրանց նախկին «դարդաշների» առաջը և խառնվելով վերջիններիս, պար գալով ուրախանալով ու երգելով շարվում են հիւպատոսարանի պատշգամբում արդէն բացված մրգեղէնով, օշարակներով և այլ խմիչքներով լի սեղանի չորս կողմը։ Քաղաքագլուխ Յ. Մելիք-Ազամալեանցը առաջարկում է Շահնշահի թանկագին կենացը։ Հիւպատոսը առաջարկում է ռուսաց կայսեր կենացը։ Հայերից մի «զուրնա-չալխալը» վեր է կենում և ասում հետևեալը. «Անհամարակ մեծ պետութիւնների հպատակները անհամար արիւն թափելուց՝ հազիւ հազ են կարողանում ազատութիւն ձեռք բերել. բայց Շահն-Շահը, գնահատելով իր ժողովրդին, չը թողեց մի կաթիլ անգամ արիւն թափել և իր արքայական յօժար կամքով շնորհեց այն, ինչ որ իր հպատակներին էր —ինչ որ ժողովուրդն էր պահանջում»։ Ամէն կենացից յետոյ կեցցէները թնդացնում էին քաղաքի այդ մասը։

Հիւպատոսը մի քանի խօսքով բացատրեց ներկայ եղողներին հայ-Թուրքական անմիտ ընդհարումը և առաջարկում է իբրև չէզոք անձնաւորութիւն, ի պատիւ օրվայ, անցածը մոռանալ, չը հետևել Շուշու օրինակին և սրանից հաշտութիւն կայացնել։

Խօսում է ուսանող Խալիլ բէգը. «Մեր ուսանողներիս սրբազան պարտականութիւնն է մեր հայրենի հողի վրա վերականգնել այն վստահութիւնը և բարեկամութիւնը, ինչ մի քանի ամիս առաջ ունէին երկու դրացի ազգութիւնը։ Այսուհետև պէտք է ձեռք-ձեռքի տուած գործենք և մինչև անգամ մեր կեանքը զոհենք համերաշխութեան համար. և յոյս իմ յայտնում, որ այսուհետև անմեղ արիւն այլ ևս չը պէտք է թափվի։ Շնորհիւ միր անմիտ բռնած ընթացքի քանի-քանի անմեղ որբեր այսօր փողոցները ընկած թափառում են, քանի-քանի հարուստ վաճառականներ աղքատացել են, քանի-քանի մայրեր սև հագած այսօր ողբում են իրանց սիրելիների կորստեան համար»։

Ճառերից յետոյ երկու կողմն էլ գոհում են, թէ հաշտվում ենք, բաւական է որքան արիւն թափվեց. կեցցէ Շահը, որ այսօր միջնորդ հանդիսացաւ երկու ազգութեան մէջ։ Եւ կարծեք թէ ոչինչ չէ պատահել երկու ազգութեան մէջ, սկսում են քէֆը աւելի մտերմական և սրտանց դարձնել։ Այսպէս մինչև ժամը մօտ 9-ը զուարճանալուց ու պարելուց յետոյ հայերը զուռնան առած մի քանի Թուրքերի հետ, փողոցներից անցնելով, հասնում են ոստիկանատան մօտ։ Այդտեղ էլ մի քանի տեղական պարեր և «լեզգինկա» պարելուց յետոյ գոհ սրտով բոլորն էլ հեռանում են իրանց տները։ Ասում են, որ այս հաշտութիւնը սերտ և ամուր է լինելու. Թէ որքան կարդարանայ ժողովրդի յոյսը, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Խօսվում է, որ վաղը, ամսիս 6-ին, Շահի արևշատութեան և լիակատար առողջութեան համար մաղթանք են կատարելու հայերը։

Գ. Աղազարեանց

Յ. Գ.—Նամակս կնքելուց լսեցի, որ երէկ երեկոյեան Վարմաշէր հայաբնակ գիւղի հանգած Թուրքերը գնդակահար են անում մի հայի և գլուխը կտրելով տանում են. երեւի իրանց ջանիբազարներից փող ստանալու պատճառով։ Քաղաքում հաշտութեան ձեռք են մեկնում մէկ-մէկու, բայց գիւղերում իրանց էշն են քշում ու չեն դադարում իրանց բարբարոսութիւններին վերջ տալուց։ Այնուհետ պէտք է գնալ, նրանց պէտք է հասկացնել այդ կորստաբեր և անդունդ տանող ճանապարհի մասին։

Նոյնը

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Օգոստոսի 1-ին

Յուլիսի 17-ին ուղարկել եմ խմբագրութեանդ հասցէով մի թղթակցութիւն, գրված նոյն ամսի 16-ից, որով, իբրև իրաւասու քաղաքիս ինքնավարութեան, բողոքել եմ «Ալիքի» № 61-ի մէջ տպված Նոր-Բայազէտից մի նամակի դէմ, ուր նկարագրած եմ մի քանի դաշնակցական պարոնների մութ գործերը, քաղաքիս ուպրաւի ընտրութիւններին և նրանց դիմակաւորված կեղծիքները ու ապօրէն միջոցները, որ թոյլ էին տուած և տալիս իրանց. բայց չը գիտեմ թէ ինչու «Մշակը» յարգելի խմբագրութիւնը մինչև այժմ չէ բարեհաճում տպել, կամ գուցէ այլ ևս չի էլ տպելու։

Այդ հանգամանքի համար անհրաժեշտ եմ համարում իմ համեստ դիտողութիւնս նորից հասցնել խմբագրութեանդ առաջ. որովհետև մենք գաւառացի բուռն ժողովրդի ներկայացուցիչներս և նոյն իսկ ժողովրդի մասսան ում կարող ենք դիմել մեր անթիւ ցաւերի [illegible] իրականութեան համար, եթէ ոչ միայն և միայն «Մշակին», որը հրաւիրված է լինել ժողովրդի և մասսայի պաշտպան և նրա շահերին դիպչողի դէմ մարտնչող, մեր խոցոտ կեանքի մէջ նեղ թայֆայական մի քանի անհատների վերաբերութեամբ։

Մեթէ հարկաւոր են ևս փաստեր նկարագրելու դաշնակցականների այն անթիւ ապօրինի գործողութիւնները, որոնք այժմ դառն են ինչպէս մեզանում, այնպէս էլ ամեն տեղ մի ժողովրդական ընդհանուր չարիք։

Ասացէք խնդրեմ, ում առաջ մենք կարող ենք լաց լինել, եթէ ոչ միայն «Մշակի», որին միշտ խնդրում ենք մեր դիմումներով դարձնել մեզ վրա իր ուշադրութիւնը։

Ձայնաւոր

Ծանօթ. խմբ. — Տպագրելով պարոն Ձայնաւորի ներկայ նամակը, պէտք է յայտնենք, որ նրա թղթակցութիւնը հետաքրքրական է և պարունակում է բնորոշ կէտեր, բայց կորցրել է իր այժմէութիւնը։ Խմբագրութիւնս օգտվում է առիթից յայտնելու, որ նա ստանում է մեր երկրի զանազան անկիւններից և տեղերից մի շարք թղթակցութիւններ, յօդուածներ, որոնցով մերկացնվում են թայֆայական անարժան գործիչների կատարած սխրագործութիւնները։ Ամենքն էլ միաբերան յայտնում են, որ «Մշակը» ինչպէս իր հիմնարկութեան օրից հանդիսացել է ժողովրդի շահերի և իրաւունքների իսկական պաշտպան, այնպէս էլ այժմ պարտաւոր է իր հեղինակաւոր ձայնով, իր մերկացումներով բանալ վէրքերը և սթափման հրաւիրել անարժան գործիչներին։ Խմբագրութիւնս շատ լաւ ըմբռնում է իր պարտականութիւնը, բայց դժբաղդաբար անհնարին է տեղ տալ բոլոր այդ թղթակցութիւններին տեղի սղութեան կամ ուրիշ յարգելի պատճառով։ Եւ եթէ յիշատակվում են փաստեր, դրանք պէտք է լինեն այնպիսիներ, որոնց ստուգութիւնը անկասկած է։ Բացի դրանից ցանկալի է որ թղթակցութիւնները ստորագրված լինեն. յամենայն դէպս խմբագրութեան պէտք է յայտնի լինեն հեղինակների անունը։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Անի, 29 յուլիսի

Միշտ արժէ տեսնել Անին։ Բագրատունեաց հարստութեան պատմական հասակի թէ փառքը, թէ կուլտուրական կեանքի մնացորդները դեռ այսօր իսկ փայլում են այդտեղ։ Պրոֆ. Մառի և ճարտարապետ Թորոմանեանի անդադրելի ջանքերով այսօր հրաշալիքներ են հանդէս բերվել, որ յիրաւի պէտք է միմիայն սքանչանալ։

Անկեղծ յարգանաց մեծ պատիւ պ. Մառին և պ. Թորոմանեանին։ Բնաւեր Անիի շէնքերից տանում ենք նախ՝ պրոֆ. Մառի և Թորոմանեանի գեղեցիկ գործերի յիշատակութիւնը, և ապա՝ հրապարակ ենք նետում էջմիածնի մի միաբանի անբարոյական արարքը։

Սևագլուխը՝ հասակով կարճ, այծի միրուքով, մեծ քթով, դուրս ընկած աչքերով մի վանական է։ Մեր հարցին թէ՝ ով է դա, գիւղացիներից մէկը պատասխանեց, թէ՝ դա է սինօդի անդամ Բ. վարդապետը։ Յիշեալ վարդապետին մենք տեսանք ուղղակի «քեօռ», հարբած դրութեան մէջ, մի քանի կանանց հետ աւերակներ «մըթութեան տեղերում» ցինիկին յատուկ խաղեր սարքելիս։ Մեզ թւում է թէ այդ բազմավիշտ տխուր աւերակները պղծվեցին նոր ի նորոյ այդ վարդապետի լկտի գործերից։ Տէր խմբագիր, խնդրում ենք Ձեզ անպատճառ տպագրութեան տալ մեզ վիշտ պատճառող տխուր իրականութեան այս պատկերը։ Մեր ռուս ընկերներն ուղղակի ուզում էին «Кавказъ» թերթում բողոքել վերոյիշեալ դէպքի առիթով, սակայն յուսալով, որ Դուք նախանձախնդիր կը հանդիսանաք ինչպէս միշտ, այնպէս էլ այժմ սոյնանման տգեղ և վարկաբեկ երևոյթի առաջն առնելուն, ուստի և Ձեզ դիմեցինք։

Խարկովի իրաւաբանական բաժնի (II-րդ կուրսի) ուսանողներ՝

1. Մարտիրոս Գանջումեան
2. Ա. Մարգարեան
3. Ս. Տէրունեան
4. Яковъ Ивановъ
5. П. Спиридоновъ

Բուլթախ (Հ.-Նախիջ. գաւ.), յուլիսի 27-ին

Ի դիմաց մեր գիւղի ծխականների՝ և խորին սրտէ յայտնում եմ հրապարակով իմ և ծխականներիս անչափ շնորհակալութիւնը տարաբնակ համագիւղացի Աղայեան Հազարապետ և Կարապետ եղբայրներին, այն առատ ինքնակամ նուիրաբերութեան համար, որ նրանք հեռուից նկատի ունենալով իրանց հայրենակիցների դժբաղդ դրութիւնը, որի մէջ յանկարծակի ընկան աշխարհաւեր Թամուր-լանկի ժանտ ժառանգների անպատկառ ընդհարման միջոցին։ Յիշեալ պարոնները համագիւղացիների ամենաանհրաժեշտ կարիքները հոգալու համար ուղարկել են մի հազար և մի հարիւր (1100) րուբլի անցեալ և ներկայ անբաղդ թւականներում, որը և իրանց ցանկութեան համեմատ արդէն գործադրվել է։

Եւ բացի յիշեալ պարոններից, մեր ծխական համայնքը ունի նոյնպէս տարաբնակ մի քանի աւելի ապահովված առևտրականներ, որոնց ուշադրութիւնն եմ հրաւիրում հետևել Աղայեանների ամենագեղեցիկ ու բարի օրինակին՝ իրանց թշուառ հայրենակիցներին օգնելու գործում։

Իսահակ քահ. Սմբաթեան

Թիֆլիս, օգոստոսի 10-ին

Խնդրեմ տպագրել Ձեր լրագրի մէջ իմ այս երկտող նամակը։

Ձեր պատուական լրագրի մէջ յայտարարած էիք իմ չքաւոր դրութեան մասին։ Ես խորին շնորհակալութիւնս եմ յայտնում Թելեթի տէր-Մարտիրոս Տէր-Մովսէսեանցին և Ծղնէթ գիւղի տէր-Ստեփան Եռամեանցին, որ նրանք չը զլացան օգնելու ինձ, հաւաքելով իրանց ծխականներից՝ առաջինը 5 ր. 65 կ., իսկ երկրորդը 9 ր. 45 կ. և ղազախեցի Վասիլին, որ նոյնպէս իր ընկերներից հաւաքեց 4 ր. 40 կ.։

Յարութիւն Մարտիրոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը առաջարկել է ոստիկանութեանը հետևել, որ տների լապտերները կանոնաւոր վառվեն գիշերները։ Նահանգապետը 25-ական րուբլի տուգանքի է ենթարկել 50-ից աւելի տանտէրերի, որոնք չեն կատարել գեն.-նահանգապետի կարգադրութիւնները։ Հրամայված է նաև հսկել, որ մանրավաճառների մօտ, խմիչքների խանութներում և հացավաճառների փուռերում չը գիշերեն զանազան անյայտ անձինք։

Անդրկովկասի երկաթուղիների ժամանակաւոր կառավարիչ գնդապետ Նեյդգէրթունէրը մի առանձին հրամանագրութեամբ պատուիրել է բոլոր իշխանաւորներին, որ տոմսակ չունեցող ճանապարհորդները ենթարկվեն բանտարկութեան կամ 3000 ր. տուգանքի։

Վ. Դաւթեանին թոյլատրված է հրատարակել ռուսաց լեզուով երկշաբաթական շաբաթաթերթ «Комаръ» (Մոծակ) անունով:

—

Երևանից գրում են «Т. Л.» լրագրին. «Մօտ օրերս կայացաւ մահմեդական ինտելիգենցիայի մի խմբի նախնական խորհրդակցութիւնը՝ Երևան քաղաքի մահմեդականների բարեկեցութեան և մտաւոր զարգացման աստիճանը բարձրացնելու նպատակով: Նախաձեռնողներ հանդիսանում են Կասումբէկօվ, Միր-Բաշիր-Աղա-Բաբաեվ, Աբաս-Կուլի-բէկ Հաջիբէգլինսկի, Ասադ-Աղա Հաջի-Ալի-օղլին: Ամբողջ սրտով նրանց աջողութիւն ենք ցանկանում, իսկ նրանց բարի մտադրութեան հակառակորդ մութ ույժերին՝ գիտակցութիւն և զարգացում»:

—

Ամսիս 9-ին քաղաքային տան դահլիճներից մէկում կայացաւ Թիֆլիսի բաղնիսատէրերի, բաղնիսների կապալառուների և բաղնիսներում ծառայողների քիսաչիների ներկայացուցիչների խառն ժողովը, նախագահութեամբ քաղաքագլխի տեղապահի և մասնակցութեամբ քաղաքային դումայի քարտուղարի: Ժողովի նպատակն էր հաշտեցնել բաղնիսների վերոյիշեալ ծառայողներին բաղնիսատէրերի և կապալառուների հետ, բաւարարութիւն տալով ծառայողների առաջադրած պահանջներին, որով և վերջ տրված կը լինէր այսքան երկար տեւած գործադուլին, որից տուժում է հասարակութիւնը: Քննվեցին կէտ առ կէտ այն որոշումները, որոնք կայացվել էին բանւորների, բաղնիսատէրերի և կապալառուների ընդհանուր ժողովում: Երկար վիճաբանութիւնից յետոյ ընդունվեցին 14-կէտերից բաղկացած որոշումներից միայն 13-ը. առաջին կէտը որոշվեց յանձնել միջնորդ դատարանի, որից յետոյ կը վերացվի գործադուլը: Այդ կէտը, որը կռուածաղիկ է դարձել, այն է, որ բանւորները յետ են պահանջում իրանցից ապօրինի կերպով հինգ տարվայ ընթացքում վերցրած ամսական 6 րուբլիները:

—

«Тиф Лист.» գրաշարները իրանց պահանջներին բաւարարութիւն ստանալով, աշխատանքի կպան, և երեկ համարը լոյս տեսաւ:

—

«Отголоски» լրագրի մէջ կարդում ենք. Մեր լրագրի երեկվայ համարում տպած լուրի առիթով, որ իբր «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամներից մի քանիսը առաջարկել են քաղաքային այգիների կառավարիչ պ. Ռոմանովին թողնել իր պաշտօնը և Թիֆլիսից հեռանալ, մեզ խնդրում են յայտնել, որ յիշեալ կուսակցութիւնը Ռոմանովին ուղղված նամակի հետ ոչ մի կապ չունի»:

—

Թիֆլիսի պօստային գրասենեակից՝ ծրարով ուղարկվող փողերը յանձնող Սերգէյ Սերգէեվը, (Սարգսեան), ինչպէս պարզվել է, գողանալով 23,000 ր., փախել է, թողնելով Թիֆլիսում կնոջը և երեք երեխաներին:

—

Վարին շրջաններում սկզբունքով վճռել են նոր մինիստրութիւն կազմել «ծայրագաւառների մինիստրութիւն» անունով, որը վարելու է Լեհաստանի և Կովկասի հետ կապ ունեցող բոլոր գործերը: Վերոյիշեալ նոր մինիստրութեան հաստատման ակտի հրատարակութիւնը սպասվում է մօտիկ ապագայում: («Р. С»)

—

Մոսկվայի համալսարանի դիւանատունը արդէն սկսել է ընդունել խնդիրներ այն կանանցից, որոնք ցանկանում են մտնել իբրև ազատ ունկնդիրներ: Ընդունելութեան ժամանակ նախապատւութիւն է տրվում գիմնազիայի 8-րդ դասարանը վերջացնողներին, բայց կընդունվեն նոյնպէս 7-րդ դասարանը վերջացնողները: Համալսարանում կանանց ընդունելու համար որոշ տոկոս է սահմանված: Իրաւաբանական ֆակուլտետում կընդունվեն այդ ֆակուլտետը մտնող ունկնդիրների ընդհանուր թւի 3%-ը պատմական լեզուաբանական՝ 2%-ը և մնացեալներում՝ 3-ական %-ը: Բժշկական ֆակուլտետում կանանց ամենևին չեն ընդունելու ազատ տեղի բացակայութեան և կանանց բարձրագոյն կուրսերում բժշկական բաժանմունք չը լինելու պատճառով:

—

Անցած տարի Ռուսաստանի երկաթուղիները մեծ վնասներ կրեցին: Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը տարվայ հաշիւը պարզելով, գտել է, որ 1905 թւին զուտ եկամուտ ունեցել է 606,494,686 րուբլի, կամ 48,335,909 րուբլի պակաս 1904 թւի եկամուտից:

—

Մոսկվայի ադմինիստրացիան, «Рус. Вѣ.»-ի ասելով, ինչպէս լսվում է, ներքին գործերի մինիստրից տեղեկութիւն է ստացել, որ Պետական Դումայի պատգամաւորական նոր ընտրութիւնները կը սկսվեն նոյեմբեր ամսի սկզբից:

—

Բանւորական պատգամաւորների խորհրդի գործը քննվելու է Պետերբուրգի դատաստանական պալատում սեպտեմբերի 19-ին: Տեղեկութիւններ են հաւաքվում այն վկաների տեղի մասին, որոնց բացակայութեան պատճառով կոչնագրերը չեն յանձնված: Բոլոր վկաների թիւը 380 է: Նախագահելու է Պետերբուրգի դատաստանական պալատի նոր նշանակված նախագահ Կրաշենինկօվը: Աչքի առաջ ունենալով վկաների այդչափ մեծ թիւը, նրանց բաժանելու են զանազան խմբերի, ամեն մէկը բաղկացած 30-40 հոգուց: Իւրաքանչիւր խմբի համար առանձին ժամանակ կը նշանակվի դատարան գալու գործի համար: Վճռված է դատավարութիւնը կատարել դռնբաց, բայց հասարակութիւնը դահլիճ կարող է մտնել տոմսակներով միայն: «Страна»

—

ԲԱՐՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Ալիք»-ում տպված մի լուրը, որով յայտնվում է իբր մեր գաւառապետ Բէլսը կոզակներով գնացել է Թաթլու Գրիգոր քահ. Ջիբէկեանի դիակը գտնելու, սուտ է. այսօր 12-րդ օրն է քահանայի անյայտանալը: Ասում են խեղճը գտնելու համար ուղարկուած է գաւառապետի այն օգնականը, որ տէր-Գրիգորի հետ վատ յարաբերութեան մէջ էր և կայց վերջին օրերը, որպէս երևում է տէր-Հօր վերջին նամակից, իրան բոլորովին իզուր անպատուել է և չափը անցկացնելով խօսացել բոլոր քահանաների, խմբերի և Դաշնակցութեան հասցէներին: Ասում են էկզէկուցիայի մասին վաղուց է թոյլտուութիւն ստացված, բայց նշանակող չը կայ, իսկ այն գիւղը ուր պիտի էկզէկուցիա նշանակվի, արթուն պրիստաւի հոգացողութեամբ վաղուց դատարկված է և թուրքերը հեռացրել են նոյն իսկ իրանց ունեցածը: Ցաւոտ լուրեր են պտտում թէ թուրքերը դիակի տեղը գիտեն, բայց գլուխը չը կայ: Մեր ազգի ճակատին համբերութիւն է գրված և համբերում ենք եզան նման, բայց չը գիտենք դեռ էլի որքան պիտի համբերենք, որ մեր կենդանի մարդոյ դիակները գոնէ մեզ տային: Մի բօպէ ենթադրեցէք թէ կորածը մօլլա է և հայ գիւղերում անյայտացած. միթէ թուրքը կամ կառավարութիւնը 12 օր անցս կը կացնէին առանց ձայն-ծպտուն հանելու և կամ միթէ հայերին անյայտ կը լինէր թէ մօլլան որտեղ է յօշոտված կամ թաղված...

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի: Շվէյցարիայում վախճանվել է ֆինանսների մինիստրի Լոնդոնի նախկին գործակալ, «Նիկոլայ Կայսրի արտաքին քաղաքականութիւնը» գրքի և ուրիշ շատ գրուածքների հեղինակ Տատիշչեվը:

Մոսկվայում, կապիտան Վօգակը և պօրուչիկ Լեբեդեվը, որպէս պօրուչիկ Սմիրնսկու հաւատարմատարներ՝ «Новое Время» ին ուղղած մի նամակով մենամարտի (դուէլ) են հրաւիրում Պետական Դումայի նախկին անդամ Եակօրսօնին Դումայում, Բէլոստոկի ջարդի առիթով, արտասանած ճառում զօրքին վիրաւորելու և դատափետելու համար: Մենամարտութիւնը թոյլատրված է բարձր իշխանութիւնից:

ՍՕՖԻԱ, 7 օգոստոսի: Լրագիրների հաղորդած լուրերին նայած, երեք օր առաջ Սանդժակի մօտ կրկին ընդհարում է տեղի ունեցել բուլգարական և թիւրքական սահմանապահ պահակախմբերի միջև: Երկու կողմից էլ կան սպանվածներ և վիրաւորվածներ: Աչք ծակող չափով սահմանապահ զօրքերի թիւը մեծացրած է: Բայց և այնպէս ճշգրիտ տեղեկութիւններ դեռ ևս չեն ստացվել: Բ. Դրան նօտային արտաքին գործերի մինիստր Պետրօվը պատասխանել է, որ Թիւրքիան իրաւունք չունի միջամտել Բուլղարիայի ներքին գործերի մէջ և որ հակայունական շարժման պատասխանատուութիւնը գլխովին ընկնում է Թիւրքիայի վրա այն հասարակ պատճառով, որ նա՝ Թիւրքիան հովանաւորում է յունական հրոսակախմբերին Մակեդոնիայում և ուրեմն այդ իր վարմունքով առաջ է բերում բուլգար ժողովրդի արդար զայրոյթը:

ՇՈՒՇԱ, 8 օգոստոսի: Օգոստոսի լոյս 9-ի գիշերը 30—40 հոգուց բաղկացած մի աւազակախումբ Շուշայից մի քանի վերստ հեռաւորութեան վրա յարձակվել է Լազարեվի գործարանի վրա, որով երկար հրացանաձգութիւն է տեղի ունեցել գործարանը պաշտպանողների և աւազակախմբի միջև, որ սակայն դադարել է բանւորների երևալով: Չարագործները փախել են:

ՏՕՄՍԿ, 9 օգոստոսի: Հոկտ. 17-ի դաշնակցութեան Տոմսկի բաժինը փակվում է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի: Նշանակվում են ծովային ակադեմիայի կառավարիչ փոխծովապետ Րիմսկի-Կորսակովը՝ ծովային մինիստրի օգնական 1-ին կարգի կապիտան Բօէվօստկի 1-ինը՝ ծովային ակադեմիայի կառավարչի պաշտօնակատար:

ԹԵՕԴՈՍԻԱ, 9 օգոստոսի: Այսօր խաղողի այգիներից մէկում անյայտ չարագործների ձեռքով մորթված է 4 հոգուց բաղկացած մի ընտանիք: Գողացված է 600 րուբլի:

ԼԻՄԱ, 9 օգոստոսի: Վալպարեզոում երեկ կրկին ստորերկրեայ ուժեղ ցնցում է զգացվել:

ՍՕՖԻԱ, 9 օգոստոսի: Բուլգարական մինիստրների խորհուրդը Մակեդոնիայում յունական հրոսակախմբերից վնասված բուլգար ընտանիքների օգտին յատկացրել է կէս միլ. ֆրանկ, Անխիալոում ժամանակաւոր բնակարաններ կառուցանելու համար՝ 200000 ֆրանկ: Սերբ կառավարութեան ցանկութիւնը Վարնայում առևտրական գործակալութիւն՝ հաստատել ու բաւարարութիւն է գտնում մինիստրների խորհրդում:

ՕԴԵՍԱ, 9 օգոստոսի: Կայացաւ խաղաղ վերածնութեան կուսակցութեան տեղիս բաժանմունքի առաջին նիստը: Կուսակցութեան անդամ են գրվում հոկտ. 17-ի դաշնակցութիւնից և առևտրա-արդիւնաբերական կուսակցութիւնից:

ՊՕԼՏԱՎԱ, 9 օգոստոսի: Ոստիկանութիւնը քաղաքի ծայրում Լէշի սապոնի գործարանում գտել է 19 ատրճանակ և 300-ից աւելի փամփուշտներ:

ԻՇԼ, 9 օգոստոսի: Առաւօտեան վախճանվեց Աւստրո-Ունգարիայի նախկին զինուորական մինիստր Կրիգգամէրը:

10 օգոստոսի

ԿԻԷՎ, 9 օգոստոսի: Շնորհիւ կապիտանների օգնականների և մեքենավարների գործադուլի՝ «Ռուսաց ընկերութեան» նաւերը դէպի Ազովեան նաւահանգիստները չեն մեկնում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի: Կանանց բարձր պատմա-լեզուաբանական և իրաւաբանական դասընթացքներում ազատ ունկնդիրների ընդունելութիւնը դադարեցրած է: Սահմանած թւից խնդրագրեր կրկնապատիկ են տրված:

ԹԵՀՐԱՆ, 9 օգոստոսի: Պարսից պետական գանձարանի և Վիլհէլմ կայսրի հաշւով կառուցվում է գերմանական համալսարան: Պրոֆեսորներ հրաւիրված են Գերմանիայից:

ԿԷՆԻԳՍԲԵՐԳ, 9 օգոստոսի: Գործադուլ արին հացաբեր բանւորները: Պահանջում են օրավարձը աւելացնել:

ՐԻԳԱ, 9 օգոստոսի: Նահանգապետի թոյլտուութեամբ լրագիրների մէջ տպված է մի կոչ, ուղղված բնակիչներին, որով հրաւիրվում է նիւթապէս օժանդակութիւն ցոյց տալ ոստիկանական պաշտօնեաներին, որոնց կեանքին վտանգ է սպառնում: Նուիրատւութիւններն ընդունվում են բանկերում և խմբագրատներում:

ԹԵՕԴՈՍԻԱ, 9 օգոստոսի: 4 հոգուց բաղկացած ընտանիքին սպանողները բռնվել են ոստիկանութեան ձեռքով փախուստի ժամանակ: Ձերբակալված է 14 հոգուց կազմված աւազակախումբը:

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 9 օգոստոսի: Ֆինլանդիայի զանազան տեղերում տեղի ունեցան կարմիր գվարդիայի անդամների ժողովները՝ քննելու յետագայ գոյութեան հարցը: Շատ դէպքերում պատրաստականութիւն է յայտնված ենթարկվել սենատի վճռին: Կարմիր գվարդիայի գաւառական բաժիններից շատերը փակվեցին: 1000 հոգուց բաղկացած ռազմիկ խումբը ցրված է: Առանձին անձինք ձերբակալված են: Գաւառներում միայն ընդդիմադրութեան թոյլ փորձեր են տեղի ունեցել: Անդամներին արձակելու դէպքում վճռված է ոչնչացնել նշանները, դրօշակները և վահանակները: Կարմիր գվարդիայի բաժան-բաժան լինելու և սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան թուլանալու հետ միաժամանակ նկատելի չափով ուժեղանում են սահմանադրականները: Կարմիր գվարդիայի ցրված մարմինները սպառնում են վրէժ լուծել ադմինիստրացիայից և հասարակութիւնից: Երէկվանից Ուլիաբօրգում տեղի են ունենում Ֆինլանդիայի սօցիալիստների ժողովները:

ՏԱՄԲՕՎ, 9 օգոստոսի: Գրիբանովկա կայարանում 4 անձինք, ուսանողների հագուստով կողոպտեցին դրամատարին և խլեցին 1600 րուբլի: Դրամատարը կարողացել է թագցնել 15,000 րուբլի:

ԲԱԳՈՒ, 9 օգոստոսի: Նոբէլի, Րոտշիլդի և և անգլիական 5 ընկերութիւնների պրոմիսլաների գործադուլը շարունակվում է: Բանւորներին արձակված են յայտարարել, բայց և այնպէս նրանք մնում են դեռ պրոմիսլաներում և օգտվում են բնակարաններից: Բանւորների մեծամասնութիւնը գիտակցում է, որ պահանջները չեն իրագործվի, բայց գլխաւորները յետ են կասեցնում նրանց աշխատանքները սկսելուց, մատնանշելով, որ երկու ամսվայ անօգուտ գործադուլից յետոյ աշխատանքները վերսկսել—կը նշանակէ պրոլետարիատի ընդհանուր շարժման հարուած հասցնել: Ըստ երևոյթին աշխատանքները շուտով կը վերսկսվեն, քանի որ խանութները հրաժարվում են այլ ևս ապառիկ բան թողնել: Միւս կողմից անբաւականութիւններ են ծագում աշխատանքները վերսկսելը պնդող բանւորների կանանց և երեխաների մէջ: Տէրրօրիստների դրօշակի տակ գործող աֆերիստների փող կորզելը հասան ծայրայեղ չափերի: Աֆերիստները տնից-տուն և կլուբից-կլուբ անցնելով փող են կորզում շարունակ:

ՎԱՐՇԱՎԱ, 9 օգոստոսի: Լեհաստանի և Լիտվայի սօցիալ-դեմօկրատները մի թռուցիկ են բաց թողել, որի մէջ զինուորների վրա յարձակվելը անուանում են յեղափոխութիւնը կազմալուծող անմիտ անխոհեմականութիւն: —Այսօր վիրաւորեցին գեներալ-նահանգապետի շտաբ-օֆիցէրին. պահակները հետևեցին չարագործներին և սկսեցին կրակել, բայց չարագործները մի տան բակից փախչելով—ազատվեցին:

ԿՕԿԱՆԴ, 9 օգոստոսի: Չերնեաևօ կայարանում ձերբակալված է պետական բանկի բաժանմունքից 130,000 րուբլի գողացող Նիաօվը:

ՄՕՍԿՎԱ, 9 օգոստոսի: Բաշխօվկում ոստիկանութիւնը ձերբակալել է 13 հոգու, գտել է շատ զէնքեր և մի ռումբ:

ԼՕՆԴՕՆ, 9 օգոստոսի: Րէյտէրի գործակալութեան հաղորդած տեղեկութիւնների հիման վրա—այն լուրերը, որ իբր պարսից ազգաբնակութեան մէջ տարածված են լուրերը այն մասին, թէ ուղարկված նամակը գրել է Էդուարդ թագաւորը,—սխալ են:

ՐԻԳԱ, 9 օգոստոսի: «Балтійская Газ.»-ի պատասխանատու խմբագիր Սավեցկին պօստով ստացել է մի նամակ, կարմիր, թանաքով գրված, որի մէջ յեղափոխականները մահվան դատավճիռ են որոշել նրան՝ էլէկտրաքարշի գործադուլի առիթով տպած յօդուածի համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի: Ի նկատի ունենալով կոմս Վիտտէի Ֆրանկֆուրտ գալու մասին տարածված կեղծ լուրերը՝ Ս. Պետերբուրգի հեռ. գործ. լիազօրութիւն ունի յայտնելու, որ կոմսը Ֆրանկֆուրտ է գնացել սոսկ բժշկութեան համար: Երեկ պր. Շլիսը նրա վրա անդամահատութիւն է կատարել ուստի և կոմսը մի քանի շաբաթ կը մնայ Ֆրանկֆուրտի շրջակայքում—յիշեալ պրոֆեսորի հսկողութեան ներքոյ:

Առևտրա-արդիւնաբերական համառուսական դաշնակցութիւնը վերջնականապէս դադարեցրեց իր գոյութիւնը: Նրա փոխարէն կազմվում է նոր առևտրա-արդիւնաբերական դաշնակցութիւն, միայն ձեռնարկութիւնների տէրերից: Ծառայողները և գործակատարները իրաւունք չունենն մտնել կազմի մէջ: Նոր դաշնակցութիւնը հետևելու է սոսկ արհեստակցական դասակարգային շահերին իրագործման: Հիմնադիր ժողովը գումարվելու է հոկտեմբերին:

ԿՈՒՐՍԿ, 9 օգոստոսի: (Պաշտ. Թղթ.): Առաւօտեան ժամը 10-ին Կուրսկ կայարանում, զինուոր Լավրովը, հարբած դրութեամբ, օֆիցէրի հետ բացատրվելու ժամանակ, սպանեց նրան ատրճանակի մի հարուածով: Լավրովը ձերբակալված է:

ԼՕՆԴՕՆ, 9 օգոստոսի: «Դէյլի-Տելեգրաֆին» հաղորդում են Տօկիօից, որ Անգլիայի, Միացեալ-Նահանգների և Ճապօնիայի միացեալ առաջարկութեան չինաց կառավարութիւնը խոստացել է մաքսատներ բանալ ռուս-չինական սահմանագլխում: Երբ Չինաստանը ի կատար ածէ իր այս խոստումը, այն ժամանակ Ճապօնիան էլ կը համաձայնէ մաքսատներ հաստատել Դալնիում և Անտունում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի: (Պաշտօնական): Օգոստոսի 8-ին մինիստրների խորհրդի նիստում քննվեց ռուսաց կայսրութեան մէջ ընդհանուր տարրական ուսում մտցնելու հարցը: Ապագայ Պետական Դումայի և Խորհրդի աշխատանքների հինգ առաջին իսկ հերթին — ընդհանուր սկզբնական ուսման օրէնքի դնելը վերին աստիճանի ցանկալի գտնելով, մինիստրների խորհուրդը օգտակար համարեց հինգ այժմ և նոր մանրամասն մշակման ենթարկել մինիստրութեան յանձնած օրինագիծը և համաձայնեցնել շահագրգռված վարչութիւնների և առանձին միջ-վարչական մասնաժողովի միջև, որը մի ամսվայ ընթացքում ներկայացնելու է նախագիծը վերջնական խմբագրութեամբ մինիստրների խորհրդին: Անկախ սրանից, մինիստրների խորհուրդը անկարող է չընդունել, որ անյապաղ անհրաժեշտ է օգնել ժողովրդական սկզբնական դպրոցների ճնշված ուսումնարանական մարմնին—ռոճիկները աւելացնելով, և նոր դպրոցներ բանալու համար պետական նախահաշւի մէջ 5,336,380 րուբլի մտցնելով:

Ապա խորհուրդը զբաղվեց գիւղացիների վերաբերեալ օրինագծերով, կարծիք յայտնելով, որ անհրաժեշտ է գիւղացիների և միւս դասակարգերի իրաւունքները հաւասարեցնել, վերացնելով գիւղացիների համար սահմանած բացառիկ սահմանափակ կանոնները:—Ապա մինիստրների խորհուրդը ընդունեց ներքին գործերի մինիստրի առաջարկը՝ Ստաւրոպոլի նահանգում արտակարգ հսկողութեան դրութիւն մտցնելու և Կովենսկի նահանգի խստացրած պահպանութիւնը շարունակելու:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

([illegible], Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզատար. հ.

Կ. Մ. ՋԻԳՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.

Ի. Կ. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ա. Գ. ՏԱՐԱՅԵԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Կին-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:

Ե. Գ. ԱՐԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: [illegible] ([illegible]) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

մշտական մահճակալներով:

Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլեկտրո-բուժութիւն:

Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.

Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.

Մ. Մ. ԷԼՉԻԲԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:

Գ. Ա. ԲԷՅԵՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկվում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և նամատուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից:

(չ. ու. կ.) 83—100

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.

Միխայլովսկի պր. տ. Ճավճաւաձէի № 36

(կ. չ. ու.) 37—100

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե. ո.) 95—100

ԲԺԻՇԿ

Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, մասնաւորապէս կրծքի:

Քննութիւն և բուժումն X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7:

Բեհբութովսկայա փող. տ. № 7 (Վէտցելի հիւանդանոցի մօտ): 2—30

ԲԺԻՇԿ

Լևոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.

(ա. օ.) 208—300

Ալեքսանդրապոլի ս. Փրկիչ եկեղեցու տղայոց երկդասեան դպրոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ է ռուսաց լեզուի ՈՒՍՈՒՑԻՉ շաբաթական 24 դասով. դասագինը 30 րուբլի:

Կրթական ցենզը ամենապակասը լինելու է է միջնակարգ: Ցանկացողները դիմելու են մինչև օգոստոսի 20-ը հոգաբարձութեան:

(չ. ու.) 2—2

Մի ընտանիք, որի հայրը անդամալոյծ պառկած է տանը, կինը և 6 երեխաները տնից-տուն ստիպված են մուրալ, խնդրում է բարի մարդկանց, ուշադրութիւն դարձնել դէպի իրանց դժբաղդութիւնը: Նուէրները խնդրում են ուղարկել Բարսեղ Մովսէսեանցին՝ Орловская ул., домъ Джанибекова, № 15, въ IV участкѣ.

1—4

Թամալեանց Մ.-ի գրքերը

1) Խուլ Խաչիկ, պատմ. վէպիկ . .	25 կ.
2) Սասունցի Յովհան, պատմ. վ.	30 կ.
3) Բաջ Աղասի, պատմ. վ. . .	25 կ.
4) Երկասիրութիւններ, ա. կապուկ .	50 կ.
5) Գալօ Ախօ և Խաչան . . .	12 կ.
6) Աստուած չը ճանաչող . . .	10 կ.
7) Ժամանակը ոսկի, պատկերազարդ .	40 կ.
8) Ծովինար	20 կ.
9) Երկու աղբերացեղ	30 կ.
10) Անմեռ աշխարհ	8 կ.
11) Շէն թագաւորի աղջիկը . .	20 կ.
12) Աստուած աղքատի կերպում .	20 կ.
13) Հէքիաթներ	30 կ.

Նոր լոյս տեսաւ՝

14) Սրտից 9 պատմ., պատկերազարդ.	40 կ.

Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Ներսիսեան դպրանոց:

(հ. կ.) 1—10

Քիշինևի հայոց ուսումնարանի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

մի հմուտ խմբապետ-ուսուցիչ: Կունենայ 6—10 դաս և վերակացութիւն: Կազմէ քառաձայն խումբ և մասնակցէ շաբաթ երեկոյեան և կիրակի ժամերգութեան: Ստանում է դպրոցում սենեակ, վառելիք, ծառայ. տարեկան ռոճիկ 420 ր., ճանապարհածախս 30 ր.: Դիմել՝ Ներս. դպ. Սարգիս սարկ. Խուցեանին կամ՝ Քիշինեվ, Армянская ограда, աւագ ուսուցիչ Գալուստ Մելիք-Յարութիւնեանին:

(ու. չ. կ.) 1—3

Թեհրանի հայոց երկսեռ դպրոցների համար հարկաւոր են 4 ուսուցիչներ և 2 ուսուցչուհիներ նպաստաւոր պայմաններով: Պայմանների մասին դիմել նոյն դպրոցների նախկին տեսուչ Լևոն Բաբայեանին, Саперный переулокъ № 5.

1—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ցարսկիյ-Կոլօդցայի հայ հասարակութեան համար հարկաւոր է մի

ՔԱՀԱՆԱՅ (Նորընծայ)

Ուսումն աւարտած լինի ճեմարանում կամ Ներսիսեան դպրոցում, որ կարողանայ բացի ժամակարգութիւնից դասեր ունենալ փոքր աշակերտների հետ հայերէն և ռուսերէն: Պայմաններն իմանալու համար թող դիմեն Թիֆլիս, Միջին-Փողոցում, եղբ. Եարղուլեանցներին:

ու. ե. 7—7

ՎԱՐՁՈՒ Է ՏՐՎՈՒՄ

Գայիանեան օրիորդաց դպրոցի ներքևի յարկը (Սօլօլակ, Պասկևիչի փողոց, տուն Տէր-Աստուրօվի № 13) 3—3 կամ միասին 6 ՍԵՆԵԱԿՆԵՐ և այլ յարմարութիւններով: Դիմել դռնապան Յարութիւնին:

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԵԹՎԱՃԵԱՆԻ

ակվարելներից փաքսիմիլէ պատրաստված

ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Գունաւոր ալբոմներ

ստացվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Գուտտենբերգի գրավաճառանոցում, Գնունու և Մարտիի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Արմենակ Ֆերվաճեանի մօտ, Օդեսսայում՝ Զարեհ Սարգսեանի մօտ:

Ալբոմի հատը 1 րուբ. 20 կոպ.

Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կոպ., ժանրային պատկերներ՝ հատը 10 կ., հազարով գնողները կը ստանան 20% զեղչ: ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշւով են:

Արտասահմանում ապրողներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին.

Թիֆլիսի կայարանում կորել է Վ. Խոբէնիի թարգմանած

«ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ»

բրօշիւրից 360 օրինակ՝ այլ իրերի հետ: Այս թարգմանութիւնից միայն Էջմիածնում և Բագւում է տարածել թարգմանիչը. ուրիշ տեղեր տարածվածը՝ գողացվածն է:

(չ. ու.) 2—2

Տուլավէրի երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է աւագ ուսուցիչ, շաբաթական ռուսաց լեզուի 12—18 դաս. վեց հարիւր րուբլի ռոճիկով, չորս վարժուհի երեք ուսուցիչ շաբաթական 18—24 դասաթուաբանութեան, ռուսաց և հայոց լեզուների, երգեցողութեան, ձեռագործի, կար ու ձևի, չորս հարիւր րուբլի ռոճիկով: Ցանկացողները պէտք է դիմեն Алаверды, попечительству армянскихъ шк

(չ. ու. կ. ե.) 1—4

Մի տիկին, որ 5 տարի շարունակ հաջողութեամբ է պարապել, որոնում է յարմար պաշտօն: Հասցէն «Մշակի» խմբագրատուն: 3—3

ԲԱՆՒՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լոյս տեսաւ՝

1. Հայրենասիրութիւն, Կ. Կաուցկու .	3
2. Պետական Դուման	3
3. Կորչեն սօցեալ դէմօկրատները, Վ. Բրակէի	10
4. Ազգային հարցը և սօցիալ-դէմօկրատիան, Ս. Շահումեանի	1

Հասցէն՝ «Կայծի» խմբագրատուն: 3-

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)

	Պօստային	Մարդատար.	Արագ.	
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26
Կարսից »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15
Ալեքսանդրապոլից դուրս գալը . .	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23
Ալեքսանդրապոլ գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48

„ՎԵՐՍԱԼ" հիւրանոց

„ՎԵՐՍԱԼ"

[ՀԻՒՐԱՆՈՑ]

Քաղաքի ամենակենտրօնական մասում

Վօրօնցովի արձանի մօտ,

ուր շաղկապվում են տրամվայի բոլոր գծերը: Համարները սկսած 1 րուբլուց և աւելի: Յարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով: Բաղանիք, դուշ, տէլէֆօն, էլէքտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ: Օդի և լոյսի առատութիւն: Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն: Խնդրում ենք չը լսել գործակալներին, երբ թէ ազատ համար կայ և այլն:

(կ. ե. հ.) 10—[illegible]

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստրութեան տնօրինութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24/4.)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացքը աւարտողներին տրվում են ատտեստատներ: Առարկաներն են. 1) առևտրական տնտեսութիւն (քաղաքական տնտեսութիւն). 2) հաշուապահութիւն (պարզ, իտալական, բանկային և գործարանային). 3) առևտրական թուաբանութիւն. 4) կանօնագրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնագրութիւն.) 5) առևտրական թղթակցութիւն 6) թուաբանութիւն համրիչի վրա. 7) վայելչագրութիւն, արագագրութիւն (առևտրական մենավատ ձեռքի ուղղել): Առարկաները ուսուցանվում են Վիեննայի առևտրական ակադեմիայի ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.: Կուրսերին կից բացվում են

ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ

(Գերմաներէն, Ֆրանսերէն եւ Անգլերէն)

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 1-ից ամենայն օր երեկոյեան 4—7 ժամը: Ծրագիրը և կանօնները ուղարկվում են և տրվում են ձրիապէս կուրսերի հիմնողի բնակարանում

10—10 Առևտրական գիտութիւնների կանդիդատ Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5